

## Իրավիճակը ԼՂ-ի Սեջ Արժանի է Միջազգային Հրատապ Արձագանգի. Freedom House

Ռազմական լարումների աճը եւ Լեռնային Ղարաբաղի հայերու՝ տարածաշրջանը հարկադրուած լքելու վտանգը արժանի են միջազգային հրատապ արձագանգի: Այս մասին յայտարարած է Freedom House միջազգային հեղինակաւոր իրաւապաշտպան կազմակերպութեան նախագահ Մայքըլ Ապրամովիցը՝ անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի մէջ սրող մարդասիրական իրավիճակին եւ Հայաստանի ու Ատրպէյճանի շփման գիծի երկայնքով ռազմական տեխնիկայի երկուսակման մասին տեղեկութիւններուն:

«Մենք խորապէս մտահոգուած ենք Ատրպէյճանի եւ Հայաստանի շփման գիծի երկայնքով ատրպէյճանական զորահասարակութեան կողմէն մասին տեղեկութիւններով: Մենք կը դատաւարտենք Հայաստանի ինքնիշխան տարածքին վրայ յարձակութիւնը որեւէ ծրագիր եւ միջնորդ կողմերուն կողմէնք աշխատելու Հայաստանի սահմաններուն անձեռնմխելիութիւնը ապահովելու ուղղութեամբ», ըսուած է յայտարարութեան մէջ, որ թարգմանաբար հրատարակած է Freedom House-ի հայաստանեան գրասենեակը:

«Ատրպէյճանի կողմէ Լաչինի միջանցքին շրջափակումը ցեղային գտման վտանգ կը ստեղծէ տարածաշրջանի հայ բնակչութեան համար եւ կը սրէ շարունակուող մարդասիրական ճգնաժամը», կը յայտնէ Ապրամովիցը:

«Մենք Ատրպէյճանի կառավարութեան կողմէնք անկեղծօրէն ներգրաւուելու խաղաղութեան բանակցութիւններուն մէջ, ձեռնպահ մնալու Լեռնային Ղարաբաղի հայերուն անվտանգութիւնը անոնց դէմ իբրեւ զէնք կիրառելի եւ բանալու Լաչինի միջանցքը՝ երաշխաւորելու մարդոց, ինքնաշարժներու եւ բեռներու անխոչընդոտ երկկողմ տեղաշարժը: Մենք նաեւ Միացեալ Ազգերու կազմակերպութեան Մարդու իրաւունքներու խորհուրդին կողմէնք նշանակելու Յատուկ Զեկուցող՝ գնահատելու մարդու իրաւունքներուն իրավիճակը Լեռնային Ղարաբաղի մէջ», ըսուած է Freedom House-ի նախագահին յայտարարութեան մէջ:

## Մեկնարկեցին Հայ-Ամերիկեան Զորավարժութիւնները

Հայաստանի մէջ մեկնարկեցին հայ-ամերիկեան զորավարժութիւնները, որոնք պիտի շարունակուին մինչեւ Սեպտեմբեր 20:

Վարժանքները խաղաղապահ բնոյթի են. հայ եւ ամերիկացի զինուորականները պիտի կատարելագործեն միջազգային խաղաղապահ առաքելութիւններուն մէջ հակամարտող կողմերուն միջեւ կայունացման գործողութիւնները:

Ամերիկեան կողմէ վարժանքներուն մէջ ընդգրկուած է 85, իսկ Հայաստանը կը ներկայացնէ 175 զինուորական: Մանր զինատեսակ պիտի չկիրառուի, միայն հրաձգային զինատեսակներ: Եւ չնայած ամերիկեան կողմը կը չի շեղուի, որ համատեղ զորավարժութիւններ Հայաստանի, Միացեալ Նահանգներու եւ այլ երկիրներու մէջ Երեւանն ու Ուլաշինկիթընը ունեցած են սկսած դեռ 20 տարի առաջուրէն՝ Ռուսաստանի իշխանութիւնները ամենատարբեր մակարդակներով կը քննադատեն Հայաստանը:



Հայ եւ Ամերիկացի բանակային զորավարժութիւնները սկսելու արարողութեան ընթացքին

նի այս որոշումը: Արտաքին գործերու նախարար Սերէյ Լաւրով կ'ըսէր, թէ որեւէ լաւ բան չի տեսներ, որ ՆԱԹՕ-ի յարձակողական երկիրը կը փորձէ ներթափանցել Կովկաս: «Չեմ կարծեր, որ այդ լաւ է որեւէ մէկուն համար, այդ

չարքին՝ նոյն ինքն Հայաստանի: Ուր ալ յայտնուած են ամերիկացիները, գիտէք՝ անոնք հարկաւոր կայաններ ունին աշխարհով մէկ, այդ լաւ բանի չէ յանգեցուցած: Այս որոշումը յատկապէս տարօրինակ է այն

Շար.ը էջ 6

## Փրոֆ. Ունիթ Քուրտ Ելոյթ Պիտի Ունեմայ «Հնչակեան Յեղափոխական Կուսակցութիւնը Այնթափ Սեջ» Նիւթին Շուրջ

«Մասիս» Հրատարակչական պիտի հիւրընկալէ հրատարակչին քննարկում մը Փրոֆ. Ունիթ Քուրտի հետ, Նիւթ ունեմայով «Հնչակեան Յեղափոխական Կուսակցութիւնը Այնթափ Սեջ. Հիմնադիրներ, գաղափարախօսութիւն եւ կառոց»:

Յայտնենք որ, Սոցեալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը իր հիմնադրութեան առաջին տարիներուն կը գործէր «Հնչակեան Յեղափոխական Կուսակցութիւն» անուան տակ:

Սոյն միջոցառումը տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի, Սեպտեմբեր 20-ի երեկոյեան ժամը 8-ին, ՀԿԲՄ-ի Փաստօրինայի կեդրոնէն ներս:

Փրոֆ. Ունիթ Քուրտ պատմաբան է արդի Միջին Արեւելքի հարցերու: Անոր ուսումնասիրութիւնները կեդրոնացած են ընկերային, մշակութային եւ տնտես-



Փրոֆ. Ունիթ Քուրտ  
սական պատմութեան շուրջ՝ Օսմանեան կայսրութեան մէջ եւ թրքական հանրապետութեան առաջին տարիներուն՝ 19-րդ եւ

Շար.ը էջ 6

## Ռուսական Բեռնատարը Ասկերանով Հասած է Ստեփանակերտ

Արցախի նոր նախագահի ընտրութենէն ժամեր անց, երբ յայտարարուեցաւ, որ ռուսները Աղտամով օդանւթին կ'ուղարկեն, պաշտօնական Ստեփանակերտը չեչտեց՝ Ասկերանով ռուսական բեռներու մուտքէն բացի պայմանաւորուածութիւն կայ, որ Լաչինի միջանցքը պիտի բացուի մարդասիրական բեռնափոխադրումներու համար: Յետոյ Ատրպէյճանը նախագահի օգնականին դէմքով յայտնեց, որ ռուսական բեռի մուտքը Ստեփանակերտ առանձին պայմանաւորուածութիւն է, չչփոխել Աղտամ-Ստեփանակերտ եւ Լաչին-Ստեփանակերտ ճանապարհներու միաժամանակեայ բացման առաջարկին հետ: Ինչպէս նախապէս յայտատարուած էր, Ռուսաստանի Դաշնութեան կառավարութիւնը հանդէս եկած է Արցախի Հանրա-

Շար.ը էջ 6

**ARMENIAN INDEPENDENCE DAY Festival**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՕՐՈՒՄԱՆ ՓԱՌԱՏՕՆ

SUNDAY, SEPTEMBER 17, 2023

VERDUGO PARK GLENDALE 1621 Canada Blvd., Glendale, CA, 91208 at 11:00 am

FREE ADMISSION  
ՄՈՒՏՔԸ ԱՉԱՏ



ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ի՞նչ Կոմպրոմիսի Դիմաց Է Արցախի Նորընտիր Նախագահը  
Համաձայնել Թոյլ Տալ, Որ Աղդամի Գանապարհը Բացուի  
«Ռուսական Ծագման» Հումանիտար Բեռների Համար

ՀԵՂԻՆԵ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Արցախը նոր նախագահ ընտրեց եւ ժամեր անց յայտնի դարձաւ, որ այլեւս իրագործուած է Աղդամի ճանապարհով Արցախ հումանիտար բեռներ հասցնելու ռուս-ատրպէյ-ճանական պլանը:

Քիչ առաջ հաղորդուեց այն մասին, որ Նոյեմբերի 9-ի յայտարարութեան արբիտր ՌԴ-ն կարողացել է բացել ոչ թէ իր պատասխանատուութեան գոտի համարուող Լաչինի՝ արդէն 9 ամիս փակ պահուող միջանցքը, այլ՝ Աղդամի ճանապարհը, որը, չիշեցնենք, արցախցիների կողմից փակ էր պահուում՝ Ատրպէյճանի «Կարմիր մահիկի ընկերութեան» կողմից փոխադրուող հումանիտար բեռների մուտքը Արցախ թոյլ չտալու համար: «Կարմիր խաչի» ռուսական համայնքի կողմից Ղարաբաղի բնակիչներին հասցունած օգնութեան մասին հաղորդել է Ատրպէյճանի «Կարմիր մահիկի ընկերութիւնը»: Օգնութիւնը, ըստ այդմ, յատկացուել է «Ռուսաստանի կառավարութեան նախաձեռնութեամբ եւ Ատրպէյճանի «Կարմիր մահիկի» եւ «Ռուսաստանի Կարմիր խաչի» համայնքների միջեւ համագործակցութեան մասին յուշագրի համաձայն՝ հայ բնակիչների պարենային կարիքները բաւարարելու նպատակով», նշուած է հաղորդագրութեան մէջ:

Փաստօրէն, հումանիտար բեռներն արդէն իսկ դէպի Արցախ ճանապարհին են, սակայն յայտնի չէ՝ մուտք կը գործեն:

Ռուսական «Կարմիր խաչի» բեռնատարը աննդամ թերթով եւ ոչ պարենային ապրանքներով Սեպտեմբերի 9-ին, ժամը 14:30-ին, «Մամուլ» անցակէտով մտել է Ատրպէյճանի տարածք՝ յաջորդիւ ապրանքները Ստեփանակերտ հասցնելու համար:

լու համար: «Մեծ բեռները կը շարժուեն Մամուլ-Պաքու-Բարդա, Աղդամ-Ասկերան-Ստեփանակերտ երթուղով»:

Արցախի պատկան մարմինները կողմից մինչեւ այս պահը մեկնաբանութիւն չի տրուել առ այն, թէ ինչպէ՞ս ստացուեց, որ Արցախի կառավարութիւնը, որը առաջարկն աչքան ժամանակ մերժում էր, ԱՀ նոր նախագահի ընտրութիւնից յետոյ որոշեց համաձայնել դրան, եւ երկրորդ՝ արդե՞ք ուժի մէջ է նաեւ ռուս-ատրպէյճանական այն խոստում-հաւաստիացումը, որ Աղդամի ճանապարհը բացուելուց յետոյ կարճ ժամանակ անց՝ մէկ օր յետոյ, կը բացուի նաեւ Լաչինի միջանցքը:

Ի դէպ, նշենք, որ մօտ մէկ ամիս առաջ, երբ շրջանառութեան մէջ դրուեց Աղդամի ճանապարհով Արցախին մատակարարում իրականացնելու հարցը եւ այդ մասին արտահոսքը յայտնուեց «Կոմերսանտում», Ատրպէյճանի ԱԳՆ պաշտօնական ներկայացուցիչ Ալհան Հաջիբաբեյը պարզաբանեց, թէ «հայերը տապալել են Աղդամի ճանապարհով «Կարմիր խաչի միջազգային կոմիտէի» հովանու ներքոյ բեռներ տեղափոխելու, դրանից 24 ժամ յետոյ էլ Լաչինի ճանապարհով, նոյն «Կարմիր խաչի» հովանաւորութեամբ, փոխադրումներն ակտիւացնելու մասին պայմանաւորուածութիւնները: Դրա հետ մէկտեղ, Ատրպէյճանի առաջարկութեամբ համաձայնեցուել էր Եւրախում Ղարաբաղի տնտեսական շրջանի հայկական բնակչութեան ներկայացուցիչներին եւ ատրպէյճանական կողմի հանդիպումը, բոլոր նախապատրաստական եւ լոգիստիկ միջոցառումները կատարուել էին: Չնայած թուարկուած քայլերին, Ատրպէյճանի Ղարաբաղի տնտեսական գոտու հայկական բնակչութեան ներկայացուցիչները վերջին պահին խախտել են բոլոր պայմանաւորութեանը, ինչը յուշում է, որ խօսքը ոչ թէ Լաչինի միջանցքի տոտալ ապաշրջափակման, ինչը ենթադրում է նաեւ ատրպէյճանական անցակէտի ապամոնտաժում, մասին է՝ վերականգնելով մինչեւ շրջափակումը գործած, Նոյեմբերի 9-ի յայտարարութեան 6-րդ կէտով սահմանուած ռեժիմը՝ ապահովելով դրանով բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների եւ մարդկանց տեղաշարժը, այլ միայն մէկ կազմակերպութեան՝ «Կարմիր խաչի» հովանաւորութեամբ բեռներ մատակարարումներ թոյլ տալու: Մի դիտարկում էլ՝ արդե՞ք Աղդամի ճանապարհը բացուելուց յետոյ Արցախը կը համաձայնի նաեւ ճանապարհի բացմամբ պայմանաւորուած՝ Եւրախում ատրպէյճանական կողմի հետ հանդիպմանը:

Նշենք, որ Արցախի բնակիչները արգելապատնէներով փակել էին Աղդամի ճանապարհը եւ մերժում էին Ատրպէյճանի կեղծ մարդասիրութիւնը՝ ազդարարելով՝ «հայ են տալիս, որ յետոյ սպանեն»: Այժմ, փաստօրէն, քանի որ հումանիտար բեռների ծագումը ոչ ատրպէյճանական է, այլ՝ ռուսական, որոշուել է դադարեցնել արգելափակումը:

Ի դէպ, արդէն յայտնել ենք, որ Արցախում գործում է Միջանցքի ապաշրջափակման ժողովրդական շտաբ, որի անդամներից մէկը՝ Դաւիթ Վանեանը, իր ֆէյսպուքեան էջում գրել է. «Կարող է յանկարծ Ակնայի ճանապարհը քցիք, փունիք որոշիք վեր մինգել դուզը պեցանել նա մինիթիթեվ: Սարքիք ակցիա, ակցիա անողների դէմ»:

Նրա գրառմանը արձագանքել

ները վերջին պահին խախտել են բոլոր պայմանաւորութեանը»:

Ուշադրութեան է արժանի՝ «Կարմիր խաչի հովանաւորութեամբ» կապակցութիւնը, ինչը յուշում է, որ խօսքը ոչ թէ Լաչինի միջանցքի տոտալ ապաշրջափակման, ինչը ենթադրում է նաեւ ատրպէյճանական անցակէտի ապամոնտաժում, մասին է՝ վերականգնելով մինչեւ շրջափակումը գործած, Նոյեմբերի 9-ի յայտարարութեան 6-րդ կէտով սահմանուած ռեժիմը՝ ապահովելով դրանով բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների եւ մարդկանց տեղաշարժը, այլ միայն մէկ կազմակերպութեան՝ «Կարմիր խաչի» հովանաւորութեամբ բեռներ մատակարարումներ թոյլ տալու: Մի դիտարկում էլ՝ արդե՞ք Աղդամի ճանապարհը բացուելուց յետոյ Արցախը կը համաձայնի նաեւ ճանապարհի բացմամբ պայմանաւորուած՝ Եւրախում ատրպէյճանական կողմի հետ հանդիպմանը:

Նշենք, որ Արցախի բնակիչները արգելապատնէներով փակել էին Աղդամի ճանապարհը եւ մերժում էին Ատրպէյճանի կեղծ մարդասիրութիւնը՝ ազդարարելով՝ «հայ են տալիս, որ յետոյ սպանեն»: Այժմ, փաստօրէն, քանի որ հումանիտար բեռների ծագումը ոչ ատրպէյճանական է, այլ՝ ռուսական, որոշուել է դադարեցնել արգելափակումը:

Ի դէպ, արդէն յայտնել ենք, որ Արցախում գործում է Միջանցքի ապաշրջափակման ժողովրդական շտաբ, որի անդամներից մէկը՝ Դաւիթ Վանեանը, իր ֆէյսպուքեան էջում գրել է. «Կարող է յանկարծ Ակնայի ճանապարհը քցիք, փունիք որոշիք վեր մինգել դուզը պեցանել նա մինիթիթեվ: Սարքիք ակցիա, ակցիա անողների դէմ»:

Նրա գրառմանը արձագանքել

են արցախցի օգտատէրերը, որոնցից մէկը գրել է. «Լաչինի միջանցքի հետ, Աղդամի ճանապարհին էլ են բացուել, իրենց պէտք էր նախագահի հրաժարականը...ինքն էլ՝ մօտ ժամանակներս...»: Վանեանն արձագանքել է. «Նոյն բանը մինչեւ հրաժարականն էին առաջարկում, ինչի չըհամաձայնուեցին: Բլոկները շարեցին, ակցիաներ կազմակերպեցին...ինչ փոխուեց»:

Արցախի մէկ այլ քաղաքական գործիչ՝ «Վաղուայ Արցախ» կուսակցութեան ղեկավար, Արցախի նախկին նախագահին կից հակաձգանաձայն լուծարուած խորհրդի նախագահ Տիգրան Պետրոսեանն էլ երէկ իր ֆէյսպուքեան լայվում, առանց անուններ նշելու յայտարարել է, թէ «գլոպալ խաղ է գնում եւ շատ մարդիկ այդ խաղադաշտում պեղչկաներ են», ապա յաւելել է, որ Ա. Յարութիւնեանի հրաժարականի պատճառները իրեն յայտնի են եւ կապ ունեն «այս գլոպալ խաղի հետ»: «Լաւ կը լինի, որ ինքը դրա մասին յայտնի»:

Կարծում եմ, որ մօտ ժամանակներս ինքը դուրս կը գալ եւ դրա մասին ժողովրդին կը յայտնի»: Նկատենք, որ ՄԱԿ ԱԽ վերջին նիստից յետոյ Ա. Յարութիւնեանը խորհրդակցութիւն էր անցկացրել Աժ պետական մարմինների, քաղաքական ուժերի հետ, որի ժամանակ քննարկուել էր նաեւ Աղդամի ճանապարհի հնարաւոր բացումը, որին խորհրդակցութեան մասնակիցներից շատերն ինչպէս նաեւ հանրութիւնը բացասաբար արագանքեցին: Մի քանի օր անց Յարութիւնեանը յայտարարեց հրաժարական տալու մասին:

«ՍԻՒԻՔ»

Բլիքքեցի Կարեւոր Յայտարարութիւնն Ու Գլխաւոր Հարցը

ՅԱԿՈՒ ԲԱՂԱԵԱՆ

ԱՄՆ պետքարտուղարութիւնը Սեպտեմբերի 10-ին տարածել է պետքարտուղար Բլինքեցիի յայտարարութիւնը Արցախում ստեղծուած իրավիճակի եւ հայ-ատրպէյ-ճանական հակամարտութեան վերաբերեալ: Պետքարտուղար Բլինքեցին կոչ է անում անյապաղ բացել Լաչինի եւ Աղդամի ճանապարհները, որպէսզի մարդասիրական բեռները մուտք գործեն Արցախ եւ բաւարարեն մարդկանց կարիքները: Միաժամանակ, Բլինքեցին նաեւ խօսում է վէճերի լուծման համար ուժի կիրառման անթոյլատրելիութեան մասին: «Միացեալ Նահանգները նաեւ հաստատում է, որ առաջ գնալու միակ ճանապարհը խաղաղութիւնն է, երկխօսութիւնն ու Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ յարաբերութիւնների կարգաւորումը՝ միմեանց ինքնիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան փոխադարձ յարգանքի հիման վրայ», յայտարարում է ԱՄՆ պետքարտուղարը:

Անշուշտ, դրանք կարեւոր յայտարարութիւններ են, միաժամանակ մանրամասն դիտարկման կարիք ունեցող: Սակայն, ներկայումս

ստեղծուած իրավիճակում, մասնաւորապէս երբ կարծես թէ բաւականին ակնառու է իրավիճակի բաւականին բարձր լարուածութիւնը, իսկ պաշտօնական Երեւանն ուղիղ է յայտարարում այդ մասին, առանցքային հարցը հետեւեալն է՝ ի՞նչ վիճակում է Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ Միացեալ Նահանգների նախաձեռնած դիւանագիտական գործընթացը, ի՞նչ հանգրուանում, այն կա՞յ, թէ՞ այլեւս համարում է տապալուած կամ ձախողուած:

ԱՄՆ պետքարտուղարութեան խօսնակը մի քանի անգամ յայտարարել է, որ պետքարտուղար Բլինքեցիի համար գործընթացը ընդհուպ անձնական հետաքրքրութեան եւ ներգրաւուածութեան խնդիր է, հետեւաբար, դրա ձախողումը նաեւ նշանակելու է ոչ միայն ԱՄՆ դիւանագիտական ջանքի անարդիւնաւետութիւն, այլ նաեւ հենց Բլինքեցիի անձնական ձախողում, ինչը թերեւս իր ազդեցութիւնը կ'ունենայ նրա յետագայ կարիերայի, այլ կերպ ասած՝ նախագահ Պայտրնի հնարաւոր երկրորդ ժամկէտի պարագագում Բլինքեցիի աշխատանքի շարունակութեան վրայ: Մեզ յուզողն իհարկէ ոչ թէ Պայտրնի կամ Բլինքեցիի, այլ Ար-

ցախի եւ արցախահայութեան ճակատագիրն է: Ողջունելի է, երբ Նահանգների պետքարտուղարը յայտարարում է, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան համաձայնագիր չի կարող լինել առանց Արցախի հայութեան իրաւունքների եւ անվտանգութեան պաշտպանութեան:

Ըստ Բլինքեցիի յայտարարութեան, Հայաստան-Ատրպէյճան որեւէ համաձայնագիր պէտք է պաշտպանի այդ իրաւունքներն ու անվտանգութիւնը: Ամբողջ հարցն այն է, թէ ԱՄՆ-ը որքանով է յանձնառու պաշտպանել իր այդ մօտեցումները Ատրպէյճանի ապակառուցողականութիւնից եւ աւելին՝ Ատրպէյճանի ազդեալ քաղաքականութիւնից, լինի դա ռազմական ուժի, թէ այն հակամարդկային գործողութիւնների տեսքով, որ արտայայտում են Արցախի տոտալ շրջափակումով: Փաստացի, այն պատկերը, որ կայ այսօր, ըստ էութեան կամ ամերիկեան ձախողման՝ ըստ այդմ անկարողութեան դրսեւորում է, կամ Ատրպէյճանին կառուցողականութեան դաշտ բերելու հարցում ԱՄՆ պատրաստակամութեան եւ ցանկութեան անբաւարար աստիճանի:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

ՄԱՍԻՍ  
ՇԱՐԱԹ ԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ  
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՐԵ ԱԶԱՊԱՅԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**



ԼՈՒՐԵՐ

Երեւանի Մէջ Հանդիսաւոր Արարողութեամբ Բացուեցաւ Կարէն Դեմիրճեանի Արձանը



Կարէն Դեմիրճեանի պրոնզածոյլ արձանը Երեւանի մարզահամերգային համալիրին առջեւ

Երեւանի մարզահամերգային համալիրի 40-ամեակի միջոցառումներու ծիրին մէջ, համալիրին դիմաց հանդիսաւոր արարողութեամբ բացուեցաւ հայակաճառոր պետական գործիչ Կարէն Դեմիրճեանի պրոնզածոյլ արձանը, որուն քանդակագործը Սարգիս Բաբայեանն է, իսկ ճարտարապետը՝ Լեւոն Առաքելեանը: Բացման պաշտօնական արարողութեան ներկայ էին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը, ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրեանը, Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեանը, Երեւանի փոխքաղաքապետ Տիգրան Աւինեանը, Կարէն Դեմիրճեանի երկու որդիները՝ Սամուէլ եւ Ստեփան Դեմիրճեանները:

«Այսօր մենք գտնուում ենք մի կառուցի առջեւ, որն իր դռները բաց 40 տարի առաջ եւ բացման օրուանից իր եզակի տեղը գտաւ ժողովրդի սրտում, հայ ճարտարապետութեան մէջ: Կառուց, որն իր մէջ համալրում է ժամանակի ճարտարապետական եւ շինարարական ամենահամարձակ լուծումները: Այս կառուցը ստեղծման օրուանից կապուած է Կարէն Դեմիրճեանի անունին հետ եւ 20 տարուց ի վեր կրում է նրա անունը: Եւ ահա այսօր այստեղ տեղ գտաւ նաեւ նրա արձանը», իր շնորհաւորական ուղերձին մէջ ըսաւ Ստեփան Դեմիրճեանը:

Երեւանի փոխքաղաքապետ Տիգրան Աւինեան իր ելոյթին մէջ լիչեցուց, որ Կարէն Դեմիրճեանը իր ամբողջ կեանքը նուիրած է Հայաստանին, ծառայած է Հայաստանին եւ շնչուցած է Հայաստանը: Խորհրդային տարիներուն ան սկիզբ դրած է Հայաստանի համակարգային զարգացման: Անկախացումէն յետոյ Կարէն Դեմիրճեանը վազգէն Սարգսեանի հետ գլխաւոր

րած է «Միասնութիւն դաշինքը», եւ 1999-ին խորհրդարանական ընտրութիւններուն, ամենաշատ ձայները ստանալէ յետոյ դարձած է ՀՀ Ազգային ժողովի նախագահ: Անոր խօսքով՝ Կարէն Դեմիրճեանը դեռ շատ բան ունէր տալու Հայաստանի արդէն իսկ անկախ հանրապետութեան նաեւ այդ պաշտօնին:

«Հոկտեմբերի 27-ի ոճրագործութիւնը թոյլ չտուեց դա անել: Ոճրագործութիւնը, որ քան էլ շատերի կողմից ընկալուած է ահաբեկչական ճանապարհով իրականացուած իշխանազաւթում, դա աւելի խորքային թիրախներ ու նպատակներ ունէր: Ոճրագործներն ու դրանց պատուիրատուները, գլխատելով խորհրդարանը՝ գլխատեցին Հայաստանում նոր-նոր ձեւաւորող իշխանական հակակշիռները մեխանիզմը, որն անչափ կարեւոր էր թէ՛ ներքին ժողովրդավարութեան, թէ՛ Հայաստանի ինքնիշխանութեան տեսանկիւնից: Ժողովրդավարութիւն եւ ինքնիշխանութիւն, սպաննելով Կարէն Դեմիրճեանին եւ վազգէն Սարգսեանին՝ հէնց սա էին փորձում սպանել չարագործները: Ցանկանալով մեր պետութիւնը վերածել կոռուպցիայի եւ ամենաթողութեան մէջ խրուած եւ հեշտ կառավարող մի գորշ կէտի, որը չպիտի ունենայ բարգաւաճման եւ ինքնուրոյնութեան ոչ մի հնարաւորութիւն», նշեց Աւինեան:

ՀՀ կառավարութիւնը Կարէն Դեմիրճեանի արձանը մարզահամերգային համալիրի տարածքին տեղադրելու որոշումը կայացուցած էր 2019 թուականին: Կարէն Դեմիրճեանը եղած է Հայաստանի կոմունիստական կուսակցութեան Կեդրոնական կոմիտէի առաջին քարտուղար, Ազգային ժողովի նախագահ:

Հայաստանի Մէջ Ստեղծուող Առաջին Արբանեակը Նոյեմբեր Ամսուան Վերջը Երկրի Ուղեծիր Պիտի Արձակուի

Բարձր Արհեստագիտական Արդիւնաբերութեան Նախարարութիւնը առաջին անգամ արտօնագիր շնորհեց մասնաւոր կազմակերպութեան՝ «Bazoomq» հիմնադրամին՝ տիեզերական գործունէութեամբ զբաղելու համար: Այս մասին Civic.am-ին տեղեկացուց բարձր արհեստագիտական արդիւնաբերութեան նախարարի մամուլի քար-

տուղար Լուսինէ Մովսիսեանը եւ յաւելեց, որ հիմնադրամը նախաձեռնած է «Hayasat-1» անուանումով արբանեակի մշակման ստեղծման ծրագրաւորման գործընթացը: «Bazoomq»-ի համահիմնադիր, խորհուրդի անդամ եւ տեխնիկական տնօրէն Հայկ Մարտիրոսեան նշեց, որ Հայաստանի մէջ ստեղծուող առաջին արբանեակի բաղ-

ԵՄ Դիտորդական Առաքելութիւնը Գրասենեակ Բացած Է Իջեւանի Մէջ



Իջեւանի մէջ Եւրոպական Միութեան դիտորդական առաքելութեան գրասենեակի բացումը

Տավուշի մարզի Իջեւան քաղաքին մէջ բացուած է Հայաստանի մէջ Եւրոպական Միութեան դիտորդական առաքելութեան գրասենեակը, կը յայտնեն Հայաստանի մէջ ԵՄ դիտորդական առաքելութեան գրասենեակէն: Սա ՀՀ-ի մէջ ԵՄ դիտորդական առաքելութեան հինգերորդ

գրասենեակն է: Մինչ այս ԵՄ առաքելութիւնը գրասենեակներ բացած է Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքին, Վայոց Ձորի մարզի Ջերմուկ քաղաքին, Սիւնիքի մարզի Գորիս եւ Կապան քաղաքներուն մէջ: Կը ծրագրուի եւս մէկ գրասենեակ բանալ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքին մէջ:

Կալանք Դրուած Է Նախկին Պատգամաւոր Ռուբէն Գեորգեանի Դատեր Պատկանող Հողատարածքին Վրայ

Վճուաբեկ Դատարանի Հակափտածութեան Պալատը 2023 թուականի Սեպտեմբեր 4-ին ամբողջութեամբ բաւարարած է գլխաւոր դատախազի տեղակալին վճուաբեկ բողոքը՝ կալանք դնելով ՀՀ Ազգային ժողովի նախկին պատգամաւոր Ռ.Գ.-ի դատեր՝ Ա.Գ.-ին, օրէնքի խախտմամբ օտարուած՝ Դաւթաշէն վարչական շրջանի Տ. Պետրոսեան փողոցի 44/2 հասցէին գտնուող, 6452 քմ մակերեսով հողատարածքին վրայ:



Ազգային ժողովի նախկին պատգամաւոր Ռուբէն Գեորգեան

Յիշեցնենք, որ 2020 թուականի Յունիս 24-ին քննիչին կողմէ որոշում կայացուած էր կալանք դնել վերոնշեալ տարածքին վրայ: Քննիչի որոշման դէմ 2020 թուականի Հոկտեմբեր 13-ին Ա.Գ.-ի ներկայացուցիչին կողմէ Երեւան քաղաքի ընդհանուր իրաւասութեան դատարան ներկայացուած էր բողոք, որը մերժուել էր, իսկ վերաքննիչ քրէական դատարան ներկայացուած բողոքը 2021 թուականի Յունուար 12-ի որոշմամբ՝ բաւարարուած: Այդ պատճառով, վերաքննիչ քրէական դատարանը Առաջին ատենի դատարանին որոշումը բեկանած էր՝ միաժամանակ վարոյթը իրականացնող մարմինին պարտաւորեցնելով վերացնել Ա.Գ.-ի իրաւունքներու եւ օրինական շահերու խախտումը: ՀՀ գլխաւոր դատախազի տե-

ղակալին կողմէ 2021 Փետրուար 22-ին վերաքննիչ քրէական դատարանի որոշման դէմ ներկայացուած էր վճուաբեկ բողոք, որ 2023 թուականի Սեպտեմբեր 4-ին բաւարարուած է:

Վճուաբեկ Դատարանի լիչեալ որոշումը ուղարկուած է վարոյթը իրականացնող մարմին՝ որոշման պահանջներուն կատարումը ապահովելու նպատակով:

Տարածքը հանդիսացած է այգի, ընդգրկուած եղած է Հողային օրէնսգիրքի 60-րդ յօդուածով սահմանուած՝ օտարման ոչ ենթակա հողամասերու ցանկին վրայ:

կացուցիչները ձեռք բերուած են արտադրողէն «Արբանեակի աշխատանքները վաղուց էին սկսուել» արդէն 2 տարի է: Մենք ձեռք ենք բերել նաեւ այնպիսի բաղաձայնիչներ, որ ունենանք արբանեակի չթուչող տարբերակը, այսինքն՝ արբանեակը մնում է երկրի վրայ: Այս ընթացքում մինչեւ արտօնագրի ստանալն աշխատանքները տարել ենք չթուչող օրինակի վրայ, իսկ այս վերջին մէկ ամսում կատարել ենք թուչող օրինակի հաւաքման, փորձարկման, ծրագրաւորման աշխատանքները: Արբանեակն արդէն

պատրաստ է, մօտակա օրերին կ'ընդարձակուի Հոլանտա, այնտեղ կ'անցնի վերջնական փորձարկում: Նոյեմբեր ամսուայ վերջին Երկրի ուղեծիր կարճակլի «SpaceX» ընկերութեան «Falcon-9» հրթիռով»:

Հայկ Մարտիրոսեանի խօսքով՝ նախորդ արբանեակէն կը տարբերի այս արբանեակը՝ աւելի պարզ է այն, իր վրայ աչք չունի, պարզապէս տեղադրուած է հայկական արտադրութեան չափիչ սարքաւորումներու համակարգ եւ տիեզերքին մէջ փորձարկում պիտի անցնի:



# ԼՈՒՐԵՐ

## Փաշինեան-Էրտողան Զեռախօսազրոյցը



Տեղի ունեցած է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ Թուրքիոյ նախագահ Ռեջեփ Թայիփ Էրտողանի հեռախօսազրոյցը:

Զրուցակիցները անդրադաձած են Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններուն եւ տարածաշրջանային հարցերու:

Զրոյցի ընթացքին երկու եր-

կիրներու ղեկավարները ընդգծած են, որ տարածաշրջանին մէջ երկարատեւ խաղաղութեան եւ կայունութեան ձեռքբերումը պիտի նպաստէ տարածաշրջանի բոլոր երկիրներու զարգացման ու բարգաւաճման:

Կողմերը նշած են, որ պիտի շարունակեն դիւանագիտական ջանքերը այս ուղղութեամբ:

## ԱՄՆ Զի ճանչնար Արցախի Նախագահական Ընտրութիւններուն Արդիւնքները

Միացեալ Նահանգները չի ճանչնար Արցախի նախագահական ընտրութիւններուն արդիւնքները: Այդ մասին Սեպտեմբեր 11-ին կայացած ձեռագրոցի ժամանակ յայտնած է ԱՄՆ Պետական Քարտուղարութեան խօսնակ Մեթիու Միլլըրը:

«Թէեւ կարելի է, որ Լեւոնային Ղարաբաղը ունենայ վստահելի ներկայացուցիչներ այս գործընթացին (երկխօսութեան □ Խմբ.) համար, բայց ինչպէս նախապէս ըսած ենք, մենք չենք ճանչնար Լեւոնային Ղարաբաղը որպէս անկախ եւ ինքնիշխան պետութիւն, եւ հետեւաբար, չենք ճանչնար այդ, այսպէս կոչուած, նախագահական ընտրութիւններուն արդիւնքները, որոնք տեղի ունեցած են վերջին օրերուն», ըսած է ան:



ԱՄՆ Պետական Քարտուղարութեան խօսնակ Մեթիու Միլլըր

Քարտուղարութեան խօսնակը: Մեթիու Միլլըրը խօսած է նաեւ Սեպտեմբեր 11-20-ին Հայաստանի մէջ տեղի ունեցող հայամերիկեան զորավարժութիւններուն եւ անոր հետեւած ռուսական արձագանգներուն մասին. «Մենք պարբերաբար կը մարզուինք մեր գործընկերներուն հետ համատեղ՝ պատրաստակամութիւնը պահպանելու համար, եւ մենք շարունակաբար կը բարելաւենք մեր գիտութիւնը: Կը կարծեմ՝ հաշուի առնելով, որ Ռուսաստանը վերջին տարիներուն ներխուժած է իր երկու հարեւաններու տարածք, ան պէտք է ձեռնպահ մնայ տարածաշրջանի երկիրներուն անվտանգութեան միջոցառումներու մասին դասախօսութիւններէ»:

## Ատրպէյճանի Սէջ Ձերբակալած Են Այդ Երկրին Կրած Իրական Ռազմական Կորուստներուն Վերաբերեալ Տեղեկութիւններ Տարածողը


Ատրպէյճանի մէջ ձերբակալած են բնակիչ մը՝ Tik-Tok հարթակի միջոցով այդ երկրի բանակին վերաբերեալ պաշտօնականին «տարբերող» տեղեկատուութիւն տարածելու համար:

Ատրպէյճանի Ներքին Գործերու Նախարարութիւնը յայտնած է, որ ձերբակալուածը 1998-ի ծնունդ ի պրահայի Փարվիզ Վուկարօղլուն

է: Ըստ ատրպէյճանական լրատուամիջոցներուն՝ ան Ատրպէյճանի իրականացուցած ռազմական գործողութիւններուն վերաբերեալ, իբր «կեղծ» տեղեկատուութիւն հրապարակած է, ատրպէյճանական բանակի կրած կորուստներուն վերաբերեալ հրապարակած է բոլորովին այլ թիւեր, որոնք տարբերուած են պաշտօնական տուեալներէն:

## Փութինը Յոյսով Է՝ Պաքուն Արցախի Սէջ Տեղային Զտուճներ Զ'իրականացնելու

Վլատիմիր Փութինը յոյս ունի, որ Ատրպէյճանի ղեկավարութիւնը Արցախի մէջ ցեղային գտուճներ չ'իրականացնեն: Ռուսաստանի նախագահին խօսքով՝ Ալիեւի վարչակազմը իրենց հաւաստիացուցած է, որ կողմ են «փափուկ գործընթացներու»: Թէ ատրպէյճանական կողմը յատկապէս որ գործընթացները կը նախատեսէ փափուկ իրականացնել, Ռուսաստանի առաջնորդը չ'մանրամասնեց:



Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութին

«Յոյսով եմ, որ ատրպէյճանական ղեկավարութիւնը, ինչպէս միշտ մեզի ըսած է եւ մինչեւ հիմա ալ կ'ըսէ, հետաքրքրուած չէ ցեղային գտուճներով: Աւելին՝ ընդհակառակը, հետաքրքրուած է, որպէսզի այդ գործընթացը փափուկ ընթանայ», յայտնեց Փութինը:

Քրեմլինի ղեկավարը այս մասին խօսեցաւ Վլատիմիր Միլլերի մէջ Արեւելեան Տնտեսական Համագործակցութեան միջոցով արձագանգելով Երեւանէն Մոսկուայի հասցէին ամենաբարձր մակարդակով հնչող մեղադրանքներուն, այդ շարքին՝ Լեւոնային Ղարաբաղի հարցով:

Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման երկարամեայ միջնորդը լիշեցուց, որ տարիներ շարունակ Հայաստանի իշխանութիւնները մերժած են խնդիրը լուծել տարածքային զիջումներու ճանապարհով, պնդելով որ պիտի պայքարին. «Մենք կը տեսնենք եւ կը հասկնանք, թէ ինչ կը կատարուի: Այս մասին շատ կարելի է խօսիլ: Մենք առաջարկած ենք կարգաւորման մեր տարբերակները: Հայաստանը կը վերահսկէր եօթը շրջան, մենք առաջարկեցինք Ատրպէյճանի հետ համաձայնութեան գալ աջակց, որ երկու շրջանները՝ Քելբաջարն ու Լաչինը, մնան փաստացի Հայաստանի վերահսկողութեան տակ, նաեւ՝ Ղարաբաղը, սակայն Հայաստանի ղեկավարութիւնը չ'համաձայնեցաւ անոր, թէեւ մենք մէկ տասնամեակ փորձած ենք համոզել Հայաստանի ղեկավարութիւնը: Երբ կը հարցնէինք՝ ի՞նչ պիտի ընէք, մեզի կը պատասխանէին՝ պիտի կռուինք: Լաւ: Ի վերջոյ, ամէն ինչ հասաւ այն իրավիճակին, որ այժմ ստեղծուած է»:

որոնք, հակական կողմին գնահատմամբ, Ատրպէյճանը պարբերաբար կը խախտէ, ինչի հետեւանքներէն մէկը Լաչինի միջանցքին շրջափակումն է: Ան որեւէ բառ չ'ըսաւ նաեւ ռուս խաղաղապահներու պատասխանատուութեան գօտիին մէջ ինչ ամիս շարունակուող մարդասիրական ծանր ճգնաժամի, սովի չ'վերացող վտանգին մասին: Ընդ որում՝ ստեղծուած իրավիճակին համար ան ոչ թէ Ատրպէյճանի ղեկավարութիւնը, այլ Հայաստանի ներկայիս իշխանութիւնը մեղադրեց՝ պնդելով, որ Փաշինեանի կողմէ Արցախը Ատրպէյճանի մաս ճանչնալով փակուած է Ղարաբաղի կարգավիճակին հարցը եւ Մոսկուայի ընելիքները այլեւս սահմանափակ են:

«Եւ Փրակի յայտարարութիւնը սա ճշդեց թուղթի վրայ: Մենք գիտենք այս մասին: Հիմա նախագահ Ալիեւը ինձի կ'ըսէ՝ «դուք գիտէք, որ Հայաստանը ճանչցած է, որ Ղարաբաղը մերն է, որ Ղարաբաղի կարգավիճակին հարցը այլեւս դրուած չէ սեղանին, այն լուծուած է»: Եւ այդ հրապարակաւ յայտարարեց Հայաստանի ղեկավարութիւնը: Սա մեր որոշումը չէ, այլ՝ Հայաստանի ղեկավարութեան», յայտնեց Ռուսաստանի նախագահը:

Քրեմլինի ղեկավարը իր խօսքին մէջ քանի մը անգամ յատուկ շեշտեց, որ Ռուսաստանը չէ, այլ Հայաստանը ճանչցած է Ղարաբաղը Ատրպէյճանի մաս եւ եթէ Հայաստանը ինք գացած է այդ քայլին, ապա Մոսկուայի կողմէ պէտք է ընէ:

## Պաքուն Յայտնած Է, Թէ Ինչ Պայմաններու Պարագային Պիտի Բանայ Լաչինի Միջանցքը

Ատրպէյճանը Միացեալ Նահանգներու եւ այլ գործընկերներու հետ բարձր մակարդակի շփումներու ընթացքին համաձայնած է Լաչինի միջանցքի եւ Աղտամ-Ստեփանակերտ ճանապարհի միաժամանակեայ օգտագործման կարծիք իր իր Միջազգային Կոմիտէի միջնորդութեամբ:

ստեղծել անցակէտին սահմանային եւ մաքսային ընթացակարգերու պահպանմամբ:

«Մենք եւս մէկ անգամ կը յայտարարենք, որ ատրպէյճանական կողմը պատրաստ է ԿԽՄԿ-ի միջնորդութեամբ Աղտամ-Խանքենդի ճանապարհին գոլգահեռ բեռներու փոխադրման համար պայմաններ ստեղծել՝ Լաչինի սահմանային անցակէտին սահմանային եւ մաքսային ընթացակարգերու պահպանմամբ», յայտնեց յայտնած է ԱԳՆ մամուլի քարտուղար Ալխան Հաճիգադանը:

Ատրպէյճանի ԱԳՆ-ն յայտարարած է, որ ատրպէյճանական կողմը պատրաստ է Աղտամ-Ստեփանակերտ ճանապարհին գոլգահեռ Լաչինի միջանցքով ԿԽՄԿ-ի միջնորդութեամբ բեռներու փոխադրման համար պայմաններ

Հիմա Ատրպէյճանի մէջ կը փորձեն պարզել, թէ ինչպէս տա-

րածուած են ոչ-պաշտօնական տեղեկութիւնները:



# Հայաստանի Եւ Ատրպէյճանի Միջեւ Խաղաղութեան Որեւէ Համաձայնագիր Պէտք Է Պաշտպանէ ԼՂ Բնակիչներուն Իրաւունքներն Ու Անվտանգութիւնը. Պլինքըն

ԱՄՆ Պետական Քարտուղարու թիւերը տարածած է նախարարին Պլինքընի յայտարարութիւնը, որով ան ընդգծած է, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան որեւէ համաձայնագիր պէտք է պաշտպանէ Լեռնային Ղարաբաղի բնակիչներուն իրաւունքներն ու անվտանգութիւնը: ԱՄՆ-ը նաեւ կը խրախուսէ Պաքուի եւ Լեռնային Ղարաբաղի բնակիչներուն միջեւ երկխօսութիւնը:



ԱՄՆ Պետական Քարտուղար Էնթոնի Պլինքըն

Ղանքերուն՝ արժանապատիւ եւ տեւական խաղաղութեան հասնելու նպատակով: Մենք կրկին կը յայտարարենք, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ որեւէ խաղաղութեան համաձայնագիր պէտք է պաշտպանէ Լեռնային Ղարաբաղի բնակիչներուն իրաւունքներն ու անվտանգութիւնը: Մենք նաեւ կը խրախուսենք Պաքուի եւ Լեռնային Ղարաբաղի բնակիչներուն միջեւ երկխօսութիւնը:

Միացեալ Նահանգները նաեւ կը հաստատէ, որ յառաջ երթալու միակ ճանապարհը խաղաղութիւնն է, երկխօսութիւնն ու Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ շարքերու թիւերը կարգաւորումը՝ միմեանց ինքնիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան փոխադարձ յարգանքի հիման վրայ»:

Յայտարարութեան մէջ նշուած է. «Միացեալ Նահանգները խորապէս մտահոգուած է Լեռնային Ղարաբաղի մէջ մարդասիրական իրավիճակի արագ վատթարացմամբ: Մենք կը նշենք, որ մարդասիրական բեռները տեղակայուած են ինչպէս Լաչինի, այնպէս ալ Աղտամի երթուղիներու մտակայքին, եւ մենք կը կրկինք մեր կոչը՝ այնպապող եւ միաժամանակ բանալու երկու միջանցքները, որպէսզի ապահովուի Լեռնային Ղարաբաղի մէջ տղամարդոց, կանանց եւ երեխաներուն խիստ անհրաժեշտ մարդասիրական բեռներու առաքումը: Մենք նաեւ առաջնորդներուն կոչ կ'ընենք գերծ մնալու որեւէ գործողութիւնը կամ կը շեղէ այդ նպատակէն: Վէճերու լուծման համար ուժի կիրառումը անընդունելի է:

Հարաւային Կովկասի մէջ վերջին շրջանին լարուածութեան աճի լույսին ներքոյ Միացեալ Նահանգները պիտի շարունակէ վճռականօրէն աջակցիլ չլուծուած հարցերը ուղիղ երկխօսութեան միջոցով լուծելու Հայաստանի եւ Ատրպէյճանի

## Ռուսաստանը Եղած Է Եւ Կը Մնայ Հայաստանի Ստերիմ Դաշնակիցն Ու Գործընկերը. Փետրով

Ռուսաստանը չի վախնար Հայաստանը որպէս դաշնակից կորսնցնելէ, Մոսկուան եւ Երեւանը կը մնան մտերիմ գործընկերներ, լրագրողներուն ըսած է Ռուսիոյ նախագահի մամուլի քարտուղար Տմիտիլի Փետրովը:

«Ոչ, մենք եղած ենք, կը մնանք եւ, վստահ եմ, պիտի ըլլանք շատ մտերիմ դաշնակիցներ եւ գործընկերներ Հայաստանի հետ, մենք կրնանք ունենալ որոշակի խնդիրներ, որոնք պէտք է լուծուին, բայց անպոք պէտք է լուծուին երկխօսութեան ծիրին մէջ, քանի որ զարգացման տրամաբանութիւնը եւ երկու երկիրներու ազգային շահերը կը թելադրեն մեր դաշինքի եւ գործընկերութեան խորացման անհրաժեշտութիւնը», ըսած է Քրեմլինի խօսնակը:

Ռուսաստանը Հայաստանի կողմէ չի տեսներ պաշտօնական ազդանշաններ այն մասին, որ Երեւանը կ'ուզէ դուրս գալ Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութեան (ՀԱՊԿ), ըսած է Փետրովը. «Մենք տեսած ենք բազմաթիւ քննարկումներ այս թեմային շուրջ, այդ շարքին, այսպէս ըսենք, Հայաստանի մէջ գտնուող արեւմտամէտ վերլուծաբաններու կողմէ, որոնք բազմիցս քննարկած են այդ: Սակայն այդ հարցին վերաբերեալ որեւէ պաշտօնական ազդանշան չենք ստացած»:

Յստակացնող հարցումին, թէ



Ռուսիոյ Նախագահի մամուլի քարտուղար Տմիտիլի Փետրով

արդեօք Ռուսաստանի Դաշնութիւնը պատրաստ է պաշտպանելու Հայաստանը, եթէ այս երկրին տարածքը յարձակման ենթարկուի, Ռուսիոյ նախագահի մամուլի քարտուղարը նշած է. «Եթէ խօսքը Հայաստանի տարածքին մասին է, ապա գիտէք՝ մենք պարտաւորութիւններ ունինք ՀԱՊԿ-ի ծիրին մէջ: Դուք նաեւ գիտէք, որ այն բանէն յետոյ, երբ Հայաստանը ճանչցաւ Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը 1991 թուականի սահմաններով, այնտեղ հանգամանքները քիչ մը փոխուեցան, ուստի սա նոյնպէս պէտք է հաշուի առնել: Այդ Երեւանի որոշումն էր»:

## Սամուէլ Շահրամանեան Ընտրուեցաւ ԼՂ Նախագահ

Արցախի Ազգային Ժողովի արտահերթ նիստով, գաղտնի քուէարկութեամբ, Սամուէլ Շահրամանեանը ընտրուեցաւ Արցախի նախագահ:

Ըստ Արցախի խորհրդարանին՝ քուէարկութեան մասնակցած է 23 պատգամաւոր: Շահրամանեան ընտրուած է ձայներու 22 կողմ, 1 դէմ յարաբերակցութեամբ:

Նախքան քուէարկութիւնը Շահրամանեանը իր ելոյթին մէջ յայտարարեց, որ «Հայաստանի Հանրապետութիւնը յետպատերազմեան իրողութիւններէ հաշուառմամբ վերանայելով իր անվտանգային հանցակարգը, փաստացի հետ է կանգնել Արցախի անվտանգութեան երաշխաւորի իր բազմամեայ առաքելութիւնից եւ որդեգրել է խաղաղութեան օրակարգ անունով մի մտեցում, որի առանցքն է կազմում Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան ճանաչելը, ներառեալ Արցախը, պայմանով, որ ապահովուած լինեն արցախահայրութեան հիմնական իրաւունքներն ու ազատութիւնները»:

Ատրպէյճանն ալ, ըստ նախագահի թեկնածուին, օգտուելով նշուած, ինչպէս նաեւ միջազգային դերակատարներու առարկայական քայլեր չկատարելու փաստէն, աստիճանաբար կը խախտէ 2020 թուականի Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութեան դրոյթները եւ կը մեծցնէ ճնշումը Արցախի վրայ՝ իր իսկ կողմէ հռչակուած «համարկման» օրակարգը կեանքի կոչելու նպատակով:

Նշելով, որ միաժամանակ, Ատրպէյճանը կը շարունակէ բոլոր միջազգային հարթակներուն վրայ թմբկահարել, որ արցախեան հակամարտութիւնը արդէն իսկ լուծուած է, Լեռնային Ղարաբաղ հակապետութիւն գոյութիւն չունի, իսկ տեղաբնակ հայերու իրաւունքները եւ ազատութիւնները ապահովման խնդիրը իր երկրի ներքին հարցն է, իսկ աշխարհաքաղաքական կեդրոնները առաջմ կը բաւարարուին միայն մտահոգութիւններու, յորդորներու եւ կոչերու օրէ օր մեծցող ծաւալով՝ Շահրամանեան արձանագրեց, որ միջազգային իրաւունքի ծիրին մէջ արցախահայրութեան իրաւունքներն ու օրինական շահերը չեն պաշտպանուիր եւ Արցախի համար այլ տարբերակ չեն թողներ քան ինքնուրոյն փորձել գտնել միջանկեալ, իրավիճակէն բխող լուծումներ:

Չնայած ՌԴ-հաւաքական Արեւմուտք հակամարտութեան ու կողմերի հակադիր դիրքորոշումներին, պէտք է արձանագրել, որ Արցախեան հակամարտութեան վերաբերեալ աշխարհում ձեւաւորուել է համախոհութիւն հետեւեալ հարցերի շուրջ՝ Արցախեան հակամարտութիւնը կարգաւորուած չէ, ինչպէս պնդում է Ատրպէյճանը, հետեւաբար Լեռնային Ղարաբաղը հանդիսանում է վիճելի տարածք, որը պէտք է ստանայ որոշակի կարգավիճակ, Արցախն ու Հայաստանը պէտք է ունենան ուղիղ ճանապարհային հաղորդակցութիւն՝ Լաչինի միջանցք: Վերջինս ի հակառակ Պաքուի պնդումներին՝ արդէն տեւական ժամանակ է փակ է եւ պէտք է բացուի: Պէտք է գործարկվեն նաեւ տարածաշրջանային այլ ճանապարհներ եւս, սակայն դրանք չեն կարող փոխարինել Լաչինի միջանցքին, կամ դիտուել դրան այլընտրանք, Ստեփանակերտը



Արցախի Ընտրութեան Նախագահ Սամուէլ Շահրամանեան

պէտք է բանակցի Պաքուի հետ: Ընդ որում, այս հարցում, թէ՛ ՌԴ-ն եւ թէ՛ հաւաքական Արեւմուտքը պատրաստ են տրամադրել հարթակ եւ հանդէս գալ միջնորդի դերում, ինչին կտրականապէս դէմ է Ատրպէյճանը», յայտարարեց Շահրամանեան՝ շեշտելով, որ ապագայ Նախագահին համար պէտք է առաջնահերթութիւն ըլլայ Ստեփանակերտը Արցախեան հակամարտութեան կարգաւորման առարկայէն, բանակցութիւններու ենթակայ դարձնելը՝ բանակցութիւններու ձեւաչափը կրնայ ըլլալ ինչպէս բազմակողմ, այնպէս ալ՝ երկկողմ:

«Միակ պարտադիր պայմանը պէտք է ըլլայ բանակցութիւններու կազմակերպումը երրորդ երկրի կողմէ՝ ձեռք բերուելիք պայմանաւորուածութիւններու կատարման անոր տրամադրած երաշխաւորութեամբ», ըսաւ Արցախի նախագահի թեկնածուն:

Պէտք է քայլեր ձեռնարկել պետութեան քունքին դրուած հրազէնը հեռացնելու եւ փոխվստահութեան մթնոլորտ ձեւաւորելու համար, յայտնեց Շահրամանեան՝ ընդգծելով, որ միայն անկէ յետոյ հնարաւոր պիտի ըլլայ առարկայական բանակցութիւններ վարել:

«Հետեւաբար, մեր առաջնահերթութիւններէն է հասնել Լաչինի միջանցքով անվտանգ երթեւեկութեան, կազմ եւ ելեկտրականութեան կանոնաւոր մատակարարումների վերականգնմանը, դիւղատնտեսական աշխատանքների անվտանգ իրականացման ապահովմանը եւ այլ կենսական նշանակութիւն ունեցող խնդիրների լուծմանը: Նշուածներն իրականացնելու համար մենք պատրաստ ենք համագործակցել բոլոր շահագրգիռ կողմերի հետ», ըսաւ Շահրամանեան:

Արայիկ Յարութիւնեանը հրաժարական ներկայացուց Սեպտեմբեր 1-ին:

Ե խմբակցութիւններէն 4-ի, այդ շարքին՝ իշխող «Ազատ Հայրենիք-ԲԲԴ»-ի նախագահի թեկնածուն նախկին նախագահի վերջին հրամանագրով պետականախարար նշանակուած Սամուէլ Շահրամանեանն էր:

Խմբակցութիւններէն միայն «Միասնական Հայրենիք»-ը այլ թեկնածու առաջադրած էր՝ Արցախի պաշտպանութեան նախկին նախարար, կուսակցութեան առաջնորդ Սամուէլ Բաբայեանը, սակայն անոր թեկնածութիւնը մերժուած էր վերջին տասը տարուան մէջ Արցախի քաղաքացիութեան ու մշտական բնակութեան մասին տեղեկանքը չներկայացնելու պատճառով:



### Ցաւալի է

#### ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ

Ցաւալի է, երբ մարդ կ'ենթարկուի ձախողութեան:

Ցաւալի է, երբ մարդ կը կքի այդ ձախողութեան բեռն տակ:

Բայց շատ աւելի ցաւալի է, երբ մարդ դաս չի քաղեր այդ ձախողութիւնէն եւ ոչ միայն ետ չկանգնիր իր ձախող ընթացքէն, այլ կ'ընթանայ նոյն աղիտաբեր ճանապարհով:

Այն ինչի, որ ականատես կ'ըլլանք վերջին ամիսներուն Հայաստանի եւ Արցախի մէջ, շատ ցաւալի է: Մեր համեստ կարծիքով, 2023-ի իրադարձութիւնները կրկնութիւնը կը թուին ըլլալ 1997-ի իրադարձութեանց, երբ Արցախի հարցը շահագործուեցաւ Հայաստանի մէջ իշխանափոխութեան հասնելու:

Հայաստանի նորանկախ Հանրապետութեան առաջին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի իրատեսական քաղաքականութիւնը միջազգային իրավիճակի ընձեռած սահմաններուն մէջ ձեռք բերելու Հայաստանի համար նպաստաւոր լուծումներ, գոհ գնաց «մահ կամ ազատութիւն» դաւանողներու ամբոխավար կոչերուն: Մահամարը թեան խախտումներով եւ ընտրական կեղծիքներով նախագահական աթոռին տիրացաւ Ռոպերթ Քոչարեանը, խաբէրով օրուան «թագադիր իշխան»ը՝ վազգեն Սարգսեանը: Երբ այս վերջինը անդադարձաւ իր սխալին եւ գալն ուղղեց 1999 Մալիաի խորհրդարանական ընտրութիւններուն, Քոչարեանի արտաքին հովանաւորները կազմակերպեցին 27 Հոկտեմբեր 1999-ի սպանդը, գլխատելով մեր պետականութիւնը, որուն հետեւեցաւ «գոյք պարտքի դիմաց» Հայաստան երկրի վաճառքը:

Այսօր նոյնանման կացութեան մը մէջ ենք եւ Արցախի մէջ պարտադրուած իշխանափոխութիւնը կը սպառնայ Հայաստանի կատարեալ ճորտացման:

1990-ականներու «ցուրտ ու մութ»ը շահագործուեցաւ «ազգայնական»ներու կողմէ, լուծարքի ենթարկելու Արցախեան ազատամարտը կերտած «ապագային»ները, ներառեալ ժողովուրդի արդար քուէարկութեամբ 1991-ին ընտրուած նախագահը:

27 տարիներու ընդմիջումէ ետք, 2018-ի խորհրդարանական ընտրութիւններուն անգամի մը համար եւս ունեցանք ժողովուրդի արդար քուէարկութեամբ ընտրուած առաջնորդ մը: Հակառակ Հրանդ Մարգարեաններու յայտա-

րարութեանց, որ 6 ամիսէն անոր տուն պիտի ուղարկեն, ան տակաւին կը մնայ իշխանութեան վրայ, հակառակ 44-օրեայ պատերազմի ահաւորութեան: Պատերազմէն 6 ամիսներ ետք կատարուած ընտրութեանց, ան դարձեալ յաղթական դուրս եկաւ, ոչ թէ իր վայելած ժողովրդականութեան համար, այլ որովհետեւ իր մրցակիցներն էին գիրենք սպառած Ռոպերթ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանը: Այս վերջիններն էին, իրենց նոյն հովանաւորով, օրեր առաջ Արցախի մէջ պարտադրուած իշխանափոխութեան մղիչ ուժերը: Սակայն այնպէս կը թուի, որ նոյնիսկ Արցախի ժողովուրդը պատրաստ է հետեւելու իր նորընտիր նախագահին:

Այսօր, Հայաստանի մէջ սկսած է աւելի լսելի դառնալ այն կարծիքը, որ Հայաստանի իրավիճակը շատ աւելի բարգաւաճ կ'ըլլար, եթէ հետեւած ըլլային առաջին նախագահի խորհուրդներուն: Այդ կարծիքը մեզ կը յուսադրէ, որ հայրենի ժողովուրդը 1997-ի դասը քաղած է եւ պիտի խուսափի անոր կրկնութիւնէն: Յուսանք:

### Սեկնարկեցին Հայ-Ամերիկեան

#### Շարունակուած էջ 1-էն

պարագային, որ երկու տարի է՝ Հայաստանը կը մերժէ մասնակցել ՀԱՊԿ-ի վարժանքներուն՝ բացատրելով այդ, որ եթէ դաշինքը դատապարտէ Ատրպէյճանը, նոր միայն Հայաստանը պիտի աշխատի ՀԱՊԿ-ի մէջ: Սակայն, երբ կը հարցնենք, որ այդ պարագային ինչո՞ւ կը շփուիք ամերիկացիներուն եւ եւրոպացիներուն հետ, որոնք չեն դատապարտեր Ատրպէյճանը, Երեւանը կը պատասխանէ,

որ անոնք չեն իրենց դաշնակիցը, այլ՝ ՀԱՊԿ-ը, ուրեմն մենք պիտի դատապարտենք: Այսպիսի տարօրինակ եւ պարզունակ տրամաբանութիւն», ըսած է Ռուսաստանի արտաքին գործերու նախարարը:

Զօրավար ժողովի ներքին մեկնարկին «Ֆրանսփրես» գործակալութիւնը հարցումներ կատարած է Երեւանի մէջ, հայաստանցիները արեւմտեան լրատուամիջոցին հետ զրոյցին հիմնականին մէջ դժգոհած են Ռուսաստանէն:

### Փրոֆ. Ումիթ Քուրտ Ելոյթ Պիտի Ունենայ

#### Շարունակուած էջ 1-էն

20-րդ դարերուն, յատուկ ուշադրութիւն դարձնելով Հայկական Յեղափոխութեան եւ Օսմանեան կայսրութեան մէջ Հայերու տեղահանութեան վրայ:

Փրոֆ. Ումիթ Քուրտ իր Դոկտորական թեզը պաշտպանած է 2016-ին, Ամերիկեան Քլարք Համալսարանի պատմութեան ամպիւրնէն ներս:

Սոյն նիւթը երկրորդն է «Մասիս» Հրատարակչականի կազմակերպած քննարկումներուն, որոնք կեդրոնացած են Հայ ժողովուրդի վերջին 150 տարիներու պատմութեան վրայ:




«Մասիս» Հրատարակչականը ոչ-հասութաբեր կազմակերպութիւն մըն է, որ կը հրատարակէ «Մասիս Շաբաթաթերթը» եւ «MassisPost.com»-ը:

# PUBLIC DISCUSSION

Organized by

## MASSIS PUBLISHING

### The Hnchakian Revolutionary Party in Aintab: Founders, Ideology and Structure

AEBU Center  
1060 N. Allen Avenue  
Pasadena, CA 91104

Starting at 8:00 pm • Wednesday

# September | 20 | 2023

Invitation

### Ռուսական

#### Շարունակուած էջ 1-էն

պետութեան մարդասիրական օգնութիւն տրամադրելու նախաձեռնութեամբ:

Սեպտեմբեր 12-ին, մարդասիրական բեռը ուսական կարմիր խաչի միջոցով եւ այդ կազմակերպութեան փոխադրակառքերով, հանրապետութեան իշխանութիւններուն թոյլտուութեամբ մուտք գործած է Արցախի Հանրապետութիւն՝ Ասկերան քաղաքով:

Օգնութիւնը կը պարունակէ ուսական արտադրութեան կենսական նշանակութեան ապրանքներ:



# Massis Weekly

Volume 43, No. 34

Saturday, September 16, 2023

## U.S., Armenian Troops Start Joint Military Exercises



YEREVAN — The U.S. and Armenian militaries began on Monday a joint military exercise in Armenia. The Eagle Partner 2023 exercise, scheduled for September 11-20, involves 85 U.S. and 175 Armenian soldiers.

“Exercise Eagle Partner’s opening ceremony has kicked off,” a spokesperson for U.S. Army Europe and Africa told the AFP news agency.

The opening ceremony of the joint military exercise was attended by The Chief of the General Staff of the RA Armed Forces- First Deputy Minister of Defense, Lieutenant General Edward Asryan.

The stabilization security operations between the conflicting parties

will be worked out within the training days by performing peacekeeping tasks.

The purpose of the exercise is to increase the level of interoperability of the unit participating in international peacekeeping missions within the framework of peacekeeping operations, to exchange best practices in control and tactical communication, as well as to increase the readiness of the Armenian unit for the planned NATO/PfP “Operational Capabilities Concept” evaluation.

The Russian Foreign Ministry expressed concern about the U.S.-

Continued on page 4

## Artsakh National Assembly Elects Samvel Shahramanyan as New President

STEPANAKERT—The National Assembly of Artsakh elected Samvel Shahramanyan, the Minister of State, as the new President on Saturday, September 9. Twenty-two MPs voted in favor of the only candidate, one voted against, and no ballots were declared invalid.

Samvel Shahramanyan was the sole candidate nominated for the position of Artsakh president. Shahramanyan received support from former President Arayik Harutyunyan's "Free Fatherland" party and three opposition groups. The 44-year-old has held various positions in the local security apparatus for over two decades. He did not make any public statements immediately after his election.

The "United Fatherland" party, representing the fifth party in Karabakh's 32-seat parliament, boycotted the vote after its leader, Samvel Babayan, was deemed ineligible to run for president due to not having lived in Karabakh for the past ten years.

Arayik Harutyunyan announced his resignation on August 31, and on September 1, he submitted his resigna-



tion to the National Assembly. Before his resignation, Arayk Harutyunyan relieved Gurgen Nersisyan of the position of Minister of State of Artsakh and appointed Samvel Shahramanyan as Secretary of the Security Council to that position.

The Azerbaijani Foreign Ministry quickly condemned Shahramanyan's election as a "blatant violation" of international law and Azerbaijan's sover-

Continued on page 4

## Democracies Must Act to Protect Human Rights and Prevent Ethnic Cleansing in Nagorno Karabakh – Freedom House



In response to increasing military tensions between Armenia and Azerbaijan and worsening conditions in Nagorno-Karabakh, Freedom House president Michael J. Abramowitz issued the following statement:

“We are deeply concerned by reports that the Azerbaijani military is massing equipment along the Armenian border. We condemn any plans to attack the sovereign territory of Armenia and urge mediating parties to work toward preventing any further violation of Armenia’s borders.

“Azerbaijan’s blockade of the Lachin corridor risks ethnic cleansing of the region’s Armenian population and is exacerbating the ongoing hu-

manitarian crisis in Nagorno-Karabakh. We urge the Azerbaijani government to engage sincerely in peace talks, refrain from weaponizing the security of Nagorno-Karabakh Armenians, and unconditionally open the blockade to guarantee unimpeded two-way movement of people, vehicles, and cargo along the Lachin corridor. We also urge the United Nations Human Rights Council to appoint a special rapporteur to assess the human rights situation in Nagorno-Karabakh.”

Armenia is rated Partly Free in Freedom in the World 2023 and Free in Freedom on the Net 2022. Azerbaijan is rated Not Free in Freedom in the World 2023 and Not Free in Freedom on the Net 2022.

## Prof. Ümit Kurt to Present Talk on “The Hunchakian Revolutionary Party in Aintab: Founders, Ideology and Structure”

PASADENA — Massis Publishing will host a public discussion titled “The Hunchakian Revolutionary Party in Aintab: Founders, Ideology and Structure” presented by Prof. Ümit Kurt on Wednesday September 20, 2023 starting 8pm at the AEBU Center, 1060 N Allen Ave., Pasadena with a Q&A to follow.

Ümit Kurt is a historian of the modern Middle East. His research is on the social, cultural, and economic history of late Ottoman Empire and early Turkish Republic in the 19th and 20th centuries with a special focus on the Armenian genocide and dispossession of Ottoman Armenians at large, imperial interest, ethnic politics, forced migration, and infrastructural transformations. He completed his dissertation in the Department of History at Clark University in 2016. He has then held several postdoctoral positions at the Center for Middle Eastern Studies at Harvard University, and the Polonsky Academy in the Van Leer Jerusalem Institute and worked as a Visiting Assistant Professor in Armenian Studies Program at California State University (CSU) Fresno. Currently, He is an



Assistant Professor in the School of Humanities, Creative Ind. and Social Sciences (History) in the University of Newcastle, Australia. He has also served as a Vice Executive Secretary for the International Network of Genocide Scholars (INoGS) from March 2020 to March 2023. His recent book, The Armenians of Aintab, has been the recipient of the Dr. Sona Aronian Book Prize for Excellence in Armenian Stud-

Continued on page 3



## Pashinyan, Erdogan Discuss Armenia-Turkey Relations, Karabakh Conflict



YEREVAN — Turkish President Recep Tayyip Erdogan and Armenian Prime Minister Nikol Pashinyan discussed rising tensions in the Nagorno-Karabakh conflict zone in a phone call on Monday.

In virtually identical readouts of the call, the press offices of the two leaders said they agreed that lasting peace and stability “will contribute to the development and prosperity of all countries of the region.” They pledged to “continue diplomatic efforts in this direction,” added the statements. No other details were reported.

Erdogan criticized “Armenia’s actions in Karabakh” on Sunday when he announced his intention to talk to Pashinyan. He pointed to the weekend election of a new Karabakh president strongly condemned by Turkey and Azerbaijan.

Erdogan spoke with Azerbaijani President Ilham Aliyev by phone on Saturday. His conversations with the two leaders came amid the increased risk of another upsurge in violence in the conflict zone.

Yerevan said last week that Azerbaijani troops have been massing

along the Karabakh “line of contact” and the Armenian-Azerbaijani border in possible preparation for another military offensive. For its part, Baku alleged growing Armenian “military provocations.” Erdogan likewise denounced Yerevan’s “provocative” moves earlier this month.

Azerbaijan’s top army general, Kerim Valiyev, arrived in Turkey earlier on Sunday for fresh talks with top Turkish military officials. Turkey provided decisive military support to Azerbaijan during the 2020 war in Karabakh.

Pashinyan offered to hold “urgent” talks with Aliyev during weekend phone calls with U.S. Secretary of State Antony Blinken and the leaders of Germany, France and Iran. It is not clear whether he also tried to phone Russian President Vladimir Putin.

Russian-Armenian relations have deteriorated further this month due to what Moscow sees as “a series of unfriendly steps” taken by Yerevan. The Russian Foreign Ministry summoned the Armenian ambassador on Friday to hand him an extraordinary note of protest.

## Antony Blinken: Any Peace Agreement Between Armenia and Azerbaijan Must Protect the Rights and Security of Nagorno-Karabakh Residents

WASHINGTON, DC — The United States is deeply concerned about the rapidly deteriorating humanitarian situation in Nagorno-Karabakh, US Secretary of State Antony Blinken said in a statement.

“We note that humanitarian supplies are positioned near both the Lachin and Aghdam routes, and we repeat our call for the immediate and simultaneous opening of both corridors to allow passage of desperately needed humanitarian supplies to the men, women, and children in Nagorno-Karabakh. We also urge leaders against taking any actions that raise tensions or distract from this goal. The use of force to resolve disputes is unacceptable,” the Secretary said.

“In light of the recent increase in tensions in the South Caucasus, the United States will continue to strongly support efforts by Armenia and Azerbaijan to resolve outstanding issues through direct dialogue, with the aim of achieving a dignified and enduring peace. We reiterate that any peace agreement between Armenia and Azerbaijan must protect the rights and security of the residents of Nagorno-Karabakh. We also encourage dialogue between Baku and residents of Nagorno-Karabakh,” Blinken stated.

“The United States further reaffirms the only way forward is peace, dialogue, and the normalization of relations between Armenia and Azerbaijan on the basis of mutual respect for each other’s sovereignty and territorial integrity,” Secretary Blinken concluded.



United States Agency for International Development (USAID) Administrator Samantha Power also warned that the humanitarian situation in Nagorno-Karabakh is rapidly deteriorating.

“The humanitarian situation in Nagorno-Karabakh is rapidly deteriorating. It’s essential that the Lachin and Aghdam routes be reopened immediately so lifesaving assistance can reach the people of NK,” Power posted on X.

## Single Truck Russian Humanitarian Aid Arrived in Stepanakert



STEPANAKERT — A single truckload of Russian humanitarian aid reached Nagorno-Karabakh on Tuesday in what Moscow described as a “first step” towards the restoration of relief supplies to the region blocked by Azerbaijan.

The truck carrying 15 tons of food and other essential items provided by the Russian Red Cross entered Karabakh from the Azerbaijani town of Aghdam, a supply route which Baku has been promoting as an alternative to the Lachin corridor connecting Karabakh to Armenia.

The authorities in Stepanakert have opposed that route until now, saying that it would legitimize the nine-month Azerbaijan blockade of the Lachin corridor. They indicated at the

weekend that they agreed to accept the Russian aid through the Aghdam road in return for an Azerbaijani pledge to allow Russian peacekeepers and the International Committee of the Red Cross (ICRC) to resume humanitarian supplies through the corridor.

The Azerbaijani Foreign Ministry said on Tuesday that Baku is ready to do that “parallel” to the opening of the second, Azerbaijani-controlled supply line.

The Russian Foreign Ministry reported later in the day an agreement on the “parallel unblocking of the Lachin and Aghdam routes.” The ministry spokeswoman, Maria Zakharova, said Moscow expects that “humanitarian aid will flow to the region unhindered in both directions on a regular basis.”

## PM Pashinyan Holds Phone Conversations with Macron, Scholz, Raisi and Blinken



YEREVAN — Prime Minister Nikol Pashinyan had phone conversations with French President Emmanuel Macron, German Chancellor Olaf Scholz, Iranian President Ebrahim Raisi, and US Secretary of State Antony Blinken on Saturday, September 9.


The Prime Minister’s Office reports that Pashinyan discussed with the interlocutors the issues related to the deepening of the humanitarian crisis in Nagorno-Karabakh, the accumulation of Azerbaijani troops around Nagorno-Karabakh, and the increasing tension on the Armenia-Azerbaijan state border.

“Prime Minister Pashinyan expressed readiness to hold urgent discussions with the President of Azerbaijan aimed at reducing the tensions,” read a government statement on his call with Macron, which reportedly took place late on Friday.

Pashinyan’s office released virtually identical readouts of his separate conversations with Scholz and Raisi. It said the French and German leaders pledged continued support for “efforts to establish peace and stability in the region.” It was not clear whether he will try to organize a fresh contact with Aliyev, as sought by Pashinyan.



## First Armenian Indigenous Satellite Will Be Sent into Orbit on Board Space X Falcon 9



YEREVAN — Bazoomq, the space research lab based in Yerevan, Armenia, that is currently developing the country's first indigenous satellite, has been officially licensed as a space operator.

Minister of High-Tech Industry Robert Khachatryan personally awarded the license to carry out space activities to the Bazoomq staff on Friday.

"This is a significant event for us because you are the first private company [in Armenia] to receive the license to carry out space activities," Khachatryan said, adding that the Armenian government attaches importance to the development of the sector.

The first Armenian indigenous CubeSat satellite will be sent into orbit

in November.

The CubeSat, named Hayasat-1, is being developed by Bazoomq, a non-profit space research lab based in Yerevan, Armenia.

Bazoomq Space Research Lab's mission is to establish and continuously develop capabilities and skills for cutting-edge space research, education and startups in and for Armenia.

Bazoomq Co-founder, board member & CTO Hayk Martirosyan told ARMENPRESS tech correspondent Karine Terteryan earlier on September 7 that Hayasat-1's testing will be completed in September and the satellite will be launched into space on board the Space X Falcon 9 in late November.

## EU Monitoring Mission Increases Patrolling Activity on Armenian-Azerbaijani Border Opens New Operating Base in Ijevan



YEREVAN — The EU monitoring mission in Armenia (EUMA) announced Thursday that it has increased its patrolling activity on the border with Azerbaijan in the Gegharkunik and Syunik Provinces to observe any military developments.

"EUMA increased its patrolling activity – among others – in Armenia-Azerbaijan border areas of Gegharkunik & Syunik Provinces to observe any military developments. Through our presence on the ground, we aim to contribute to calming tensions & EU impartial reporting on the situation," EUMA said in a post on X.

"Through our presence on the ground, we aim to contribute to the reduction of tensions and impartial coverage of the situation," EUMA said.

Earlier, the EU mission reported

to Brussels on the rising tension on the Armenian-Azerbaijani border.

The EU Mission in Armenia has opened a new operating base in Ijevan.

Head of Mission Markus Ritter, Head of the EU Delegation to Armenia, Ambassador Vassilis Maragos, Armenia's Deputy Defense Minister Karen Sargsyan, and Governor of Tavush Province Hayk Ghalumyan cut the ribbon to the new EUMA offices in Tavush.

EUMA is a non-armed, civilian and non-executive mission with the aim to observe and report to the EU on the security situation on the ground. The mission is deployed on the Armenian side of the border between Armenia and Azerbaijan, with Headquarters in Yeghegnadzor, planned six Forward Operating Bases (FOBs) and a Support and Liaison office in Yerevan.

## Kim Kardashian Issues Plea to President Biden to Prevent Another Armenian Genocide

RollingStone

MUSIC POLITICS TV & MOVIES (SUB)CULTURE RS RECOMMENDS

COMMENTARY

### Kim Kardashian: My Plea to Joe Biden to Stop Another Armenian Genocide

Kim Kardashian and Dr. Eric Esrailian write about how it's time for America (and the world) to take action to protect Armenians from Azerbaijan

BY KIM KARDASHIAN, DR. ERIC ESRAILIAN

SEPTEMBER 8, 2023



LOS ANGELES — Entrepreneur and activists Kim Kardashian and Dr. Eric Esrailian have sent a message to President Joe Biden in the hopes of preventing another Armenian Genocide.

"WE ARE ARMENIAN. We are the descendants of Armenian Genocide survivors, and we do not want to be talking about the recognition or commemoration of yet another genocide in the future," they wrote in a piece published by the Rolling Stone.

They reminded that since December of last year, Azerbaijan has blockaded the only lifeline between the indigenous Christian Armenians of Artsakh (also known as Nagorno-Karabakh) and the rest of the world, adding that the war in Ukraine has meant some countries have had to rely on Azerbaijan for oil – resulting in using "starvation as a weapon against the Armenian population in the region."

"There is no more time for thoughts, prayers, or concern," Kardashian and Esrailian emphasize.

They look back at the war after Azerbaijan's attack on Armenians in 2020, a move they describe as baseless and unjustified, and say it has "never ended in the minds of Armenians around the world."

"Despite a ceasefire agreement, the attacks on Armenian soldiers have been constant and without repercussions," the essay continued.

They also point out that indications of a forthcoming genocide are present as human rights groups like the International Committee of the Red

Cross have been blocked, along with "hateful rhetoric accompanying the blockade."

Stating that "the collective silence or inaction" by people and government entities "has perpetuated the crisis," the authors call on Biden, and U.S. Secretary of State Antony Blinken "to take a stand immediately." "They must pressure Azerbaijan to open the corridor without preconditions," they stress.

"We are just two people. We have been working behind the scenes to support our Armenian brothers and sisters, but this diplomatic approach has not yielded meaningful results," write Kardashian and Esrailian, adding, "This crisis will clearly not be remedied by individuals, but we will continue to do what we can to use whatever influence we have."

"The people in Artsakh want to live in peace. Now is the time for true leadership. We need for those who have a meaningful role in these affairs to immediately demand that the Lachin Corridor is opened to stop another genocide. We want to draw more attention to the crisis and appeal to those in our own government who truly care about humanity to intervene. The United States has the ability to mobilize a response. Leaders who are effective and help our people will be remembered for their heroism. Even if well-meaning, the ones who are inert and ineffective will be remembered for allowing a genocide to take place under their watch. The choice is theirs," they conclude.

## Prof. Ümit Kurt to Present Talk

Continued from page 1

ies, Honorable Mention Book Prize by Ottoman and Turkish Studies Association (OTSA), and PROSE Award Finalist in the World History category, the Association of American Publishers in 2022. He is also the author of Antep 1915: Genocide and Perpetrators (Ýletipim, 2018) and the co-author of The Spirit of the Laws: The Plunder of Wealth in the Armenian Genocide (Berghahn, 2015).

This presentation is second in a series organized by Massis Publishing which will focus on Armenian history over the last 150 years. Massis Publishing is a non-profit organization that operates Massis Weekly and MassisPost.com while managing a substantial catalog of Armenian music. Massis Publishing plans to republish historically significant materials and establish an archive of its own collection. For more information, please contact Massis Publishing at Info@MassisPost.com.



## NAASR to Host Webinar With Bedross Der Matossian On Denial of Genocides in the 21st Century

BELMONT, MA -- The NAASR / Calouste Gulbenkian Foundation Series on Contemporary Armenian Issues will host an online presentation by Dr. Bedross Der Matossian on Wednesday, September 20, 2023, at 7:30 pm Eastern / 4:30 pm Pacific, discussing the new publication *Denial of Genocides in the Twenty-First Century*, in conversation with Marc A. Mamigonian. This program is co-sponsored by the Society for Armenian Studies (SAS).

The webinar will be accessible live on Zoom (registration required) and on NAASR's YouTube Channel.

*Denial of Genocides in the Twenty-First Century* (Univ. of Nebraska Press, 2023), edited by Bedross Der Matossian, brings together leading scholars from across disciplines to add to the body of genocide scholarship that is challenged by denialist literature and provides insights into how genocide denial is becoming a fact of daily life in the twenty-first century.

Throughout the twenty-first century, genocide denial has evolved and adapted with new strategies to augment and complement established modes of denial. In addition to outright negation, denial of genocide encompasses a range of techniques, including disputes over numbers, contestation of legal definitions, blaming the victim, and various modes of intimidation, such as threats of legal action. Arguably the most effective strategy has been denial through the purposeful creation of misinformation.

In this program, there will be an overview of the volume, which encompasses cases ranging from the



genocide of Indigenous People in the United States to the genocidal violence in Syria in the past decade, including three chapters on denial of the Armenian Genocide; and the conversation will also consider the key role of denial in the current crisis in Artsakh (Nagorno-Karabagh), which is increasingly being recognized as a genocide in progress.

Dr. Bedross Der Matossian is Professor of Modern Middle East History and the Hymen Rosenberg Professor in Judaic Studies at the University of Nebraska-Lincoln. He is the author of *The Horrors of Adana: Revolution and Violence in the Early Twentieth Century* and *Shattered Dreams of Revolution: From Liberty to Violence in the Late Ottoman Empire*.

Marc A. Mamigonian is the Director of Academic Affairs at NAASR and the author of "Weaponizing the First Amendment: Denial of the Armenian Genocide and the U.S. Courts" in *Denial of Genocides in the Twenty-First Century*.

For more information contact NAASR at [hq@naasr.org](mailto:hq@naasr.org).

## U.S., Armenian Troops Start

Continued from page 1

Armenian joint drills calling it an "unfriendly" action by Yerevan.

"I don't think [the exercise] is good for anyone, including Armenia," Russian Foreign Minister Sergei Lavrov said at the weekend. "Wherever the Americans showed up — you know, they have hundreds of bases around the world — it didn't lead to anything good."

The Armenian government did not respond to the criticism. Only one pro-government lawmaker, Gagik Melkonyan, agreed on Monday to comment, saying that Lavrov "always wants to destroy our country." Melkonyan also claimed that Russian-Armenian relations have deteriorated because Yerevan is no longer willing to let Moscow "make decisions for us."

The United States has described its joint military exercise with Armenia as 'a routine exercise that is in no way tied to any other events.'

"No, not at all. We routinely train and operate alongside our partners to maintain readiness, and we continually — continuously improve on the interoperability between our armed forces," U.S. State Department spokesperson Matthew Miller said at a press briefing when asked whether the exercise is designed forestall a potential Azerbaijani attack. "Armenia is a longstanding partner to the United States and has an enduring relationship since 2003 with the Kansas National Guard as part of the Department of Defense's State Partnership Program. So no, this is a routine exercise that is in no way tied to any other events," Miller added.

Miller also addressed Russia's concerns over the exercises.

I think that given Russia has invaded two of its neighbors in recent years, it should refrain from lecturing countries in the region about security arrangements," he said.

## AIWA Los Angeles Affiliate Pays Tribute to Beloved Founding Members at Heartfelt Luncheon Event



LOS ANGELES — The Armenian International Women's Association (AIWA) Los Angeles Affiliate hosted a memorable luncheon on August 25, 2023, to honor and celebrate the lives of three esteemed members who recently passed away. The event, held at the elegant California Club, brought together 200 guests to remember and pay tribute to Lily Ring Balian, Flora Dunaians, and Savey Tufenkian.

Flora Dunaians and Savey Tufenkian, both founding members of the AIWA Los Angeles Affiliate Chapter were instrumental in shaping the organization's growth and mission. Lily Ring Balian was an early member and past president of the organization. Their dedication to AIWA's values and their tireless efforts to support Armenian women and communities left a profound impact that continues to inspire.

The event was a reflection of the grace and strength that these remarkable women embodied throughout their lives. Beautiful floral arrangements adorned the venue, setting a lovely and uplifting atmosphere. The See's Candy favors, a love that all three honorees shared, reflected the sweet memories they created together.

The program included heartfelt speeches and tributes by prominent individuals who knew and admired the honorees. Emmy Award winning Fox

11 news anchor, Araksya Karapetyan, and AIWA-LA past president, Cindy Norian, shared moving stories about the life and legacy of Lily Ring Balian. Talar Bilemjian, Flora Dunaians' granddaughter, spoke with admiration about her grandmother and the importance of keeping Armenian traditions alive, while AIWA-LA co-founder, Hermine Janoyan eloquently conveyed the profound impact of work with dear friend Flora on so many projects. Savey's granddaughter, Sarah Cipolla, and AIWA, LA co-founder Elizabeth Agbajian paid a meaningful tribute to Savey whose dedication to AIWA and many other causes will forever be remembered. Beautiful music was provided by Greg Hosharian on piano and Angela Amirian on violin who performed interludes featuring songs that were favored by the honorees.

The AIWA Los Angeles Affiliate extends its deepest gratitude to all who attended this special event which served as a testament to the enduring influence and spirit of these three beloved women. Their contributions to AIWA and the Armenian community will forever be cherished and celebrated.

For more information about AIWA and its ongoing initiatives, including details about the upcoming conference, Local to Global – Uniting for Change, in Armenia, October 5<sup>th</sup> – 7<sup>th</sup> please visit [www.aiwainternational.org](http://www.aiwainternational.org)

## Artsakh National Assembly Elects

Continued from page 1

eighty over Karabakh. It claimed that Armenia and the "separatist regime" in Stepanakert "have taken the path of provocations and escalation of the situation."

Turkey also condemned the presidential elections held today in Nagorno-Karabakh.

According to the Azerbaijani "Trend" news agency, Turkey's Foreign Ministry described it as "a new manifestation of the attempt to legitimize the situation in the region, which contradicts international law."

According to Ankara, "that step [elections in Artsakh] is a violation of international law, including UN Security Council resolutions and OSCE prin-

ciples."

The European Union spokesperson Nabila Massrali issued a statement disapproving of the election.

"In view of the so-called 'presidential elections' in Khankendi/Stepanakert on 9 September 2023, the European Union reiterates that it does not recognize the constitutional and legal framework within which they have been held.

At the same time, the EU believes that it is important for the Karabakh Armenians to consolidate around de facto leadership that is able and willing to engage in result-oriented discussions with Baku. The EU is committed to supporting this process." Read the statement.



### Հայ Երգը Դարձեալ Թեւածեց Փաստինայի Բացօթեայ Հաւաքին



Աւելի քան տասնամեակէ մը ի վեր Փաստինայի եւ շրջակայքի բնակչութեան համար, կը կազմակերպուի միջ-ամառնային ճաշկերոյթ համերգ, լեռնալանջին առանձնատան մը գեղատեսիլ պարտէզին մէջ:

Սոյն յիշարժան բացօթեայ միջոցառումն այս տարի տեղի ունեցաւ անցեալ Շաբաթ, Սեպտեմբերի 9-ին, որուն ներկայ էին շուրջ 300 հոգի, մեծ մասամբ տարբեր մշակոյթներու պատկանող տեղացիներէ, որոնք եկած էին բաց երկնքի տակ ըմբոշխնելու ամառնային հաճելի երեկոյ մը:

Օրուան հանդիսավար՝ Նաթ Նեհտար, իր ողջունի խօսքին մէջ, նշեց որ սոյն հանդիպումը կազմակերպուած է յատկապէս յարգանքի տուրք մը մատուցանելու Ամերիկայի, մասնաւորաբար՝ 2001 թուականի Սեպտեմբերի 11-ին, Նիւ Եորքի մէջ տեղի ունեցած մեծ աղէտին որուն զոհ գացին շուրջ 3000 հոգի: Առ այդ՝ ներկաները մէկ վայրկեան յոտնկայս լուծեամբ յարգեցին անմեղ նահատակներու յիշատակը: Նոյն պահուն տեղի ունեցաւ դրօշակի եւ յիշողութեան արարողութիւն, Փաստինայի հրէշջ գունտի պահակներու առաջնորդութեամբ ի յարգանս 9-11-ի զոհերուն:

Այնուհետեւ տեղի ունեցաւ ինքնասպասարկման ձեւով աւանդական ընթրիքը, որ գործադրուեցաւ բացառիկ կարգապահութեամբ:

Հաւաքի երկրորդ մասը գեղարուեստական յայտագիրն էր, որուն ընթացքին ելոյթներ ունեցան շնորհալի արուեստագէտներ եւ երաժիշտներ, Ռուսլան Պըրիքով (Թաւ ջութակ) եւ Մակի Լիի (դաշնամուր), կատարելով Սէն Սանսի «Կարապ»ը: Նուիրուած 9-11-ի զոհերուն: Իսկ «Անկարելի Երագ», Man of La Mancha ու Summer Time հոյակապ կերպով մեկնաբանեց ճագ

երաժշտութեան ժողովրդային երգչուհի՝ Զուրի Ալեքսանդրը, դաշնամուրի ընկերակցութեամբ՝ Իւնիս Լիի: Տաղանդաշատ ջութակահարուհի Նաթալի Խիուն մեկնաբանեց գոմբողտոր Ռոպերթ Ռասըլ Պէնէթի ստեղծագործութիւնները:

Յայտագիրին մէջ կարեւոր բաժին մը յատկացուած էր հայ երաժշտութեան եւ երգարուեստին: Արդարեւ Մելիք Մալխազալեանի յօրինած «Կապուտ Մանուշակ» գուգերգը ինքնուրոյն մեկնաբանութեամբ կատարեցին շնորհալի սփորանօ Արփի Այնթապլեանը եւ վոկալիստ Վարդան Գազանճեանը, դաշնակի ընկերակցութեամբ Յարութիւն Զիրօյլեանի: Անոնք մեծ ապրումով երգեցին նաեւ Արամայի Սահակեանի «Ղարաբաղ Իմ» ժողովրդային գուգերգը, արժանանալով երկարատեւ ծափահարութիւններու:

Արտեմի Այվագեանի «Երեւան» դժուարին բայց գեղեցիկ երգը կրցաւ մեծ վարպետութեամբ մեկնաբանել անուանի սփորանօ Արփի Այնթապլեանը եւ առաւել հայրենասիրութեամբ ոգեւորել ներկաները:

«Պոէմ Կոմիտասի» գործը ժամանակակից ստեղծագործութիւն մըն էր շնորհալի դաշնակահար եւ յօրինող Վաչէ Մանկրեանի, զոր կատարեց մեծ վարպետութեամբ: Հանրածանօթ երաժիշտը իր այս գործով նոր յաւելում մը արձանագրեց իր հարուստ կենսագրութեան վրայ:

Սոյն յիշարժան համերգն իր աւարտին հասաւ «Հրէշտակները Ներդաշնակութեան մէջ» նուագով, կատարողութեամբ Եին Եին Հուանկի (դաշնակ) եւ Ռուսլան Պըր Եուքովի (Թաւ ջութակ):

Ներկաները յիշարժան հաւաքէն բաժնուեցան բարձր տրամադրութիւններով:

### Լեհաստանի Մէջ Հայ Առաքելական Եկեղեցւոյ Արքեպիսկոպոսութեան Հիմնադրման 655- Ամեակին Նուիրուած Տօնակատարութիւն



Սեպտեմբեր 3-ին Լեհաստանի մէջ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Արքեպիսկոպոսութեան հիմնադրման 655-ամեակի տօնակատարութեան ծիրէն ներս կրակովի վաւելի Մայր Տաճարին մէջ տեղի ունեցած է տիեզերական աղօթք՝ կրակովի միտրոպոլիտ Մարեկ արքեպիսկոպոս Յեղրաշէսկիի, Լեհաստանի Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ հոգեւոր առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Մարկոս եպիսկոպոս Յովհաննիսեանի եւ Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական պատուիրակ, վատիկանի մէջ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ՝ Գերաշնորհ Տ. Խաթակ արքեպիսկոպոս Պարսամեանի կողմէ:

Արարողութեան ներկայ էին Լեհաստանի Հանրապետութեան Նախագահի խորհրդական Անճէյ Վաշկոն, Լեհաստանի մէջ ՀՀ դեսպան Սամուէլ Մկրտչեան, Զապէի մէջ ՀՀ պատուաւոր հիւպատոս Հրաչեայ Պոյաճեան, Ներքին գործերու եւ վարչակազմի նախարարութեան վարչութեան տնօրէն Անճէյ Սօսնովսկին եւ Լեհաստանի հայ համայնքի ներկայացուցիչներ:


Գերաշնորհ Խաթակ արք. Պարսամեան, դիմելով ներկաներուն, իր խօսքին մէջ մասնաւորապէս ըսաւ. «Լեհաստանի մէջ հայերու ներկայութիւնը գրեթէ 800 տարուայ երկար պատմութիւն ունի: Անոնք ողջունուեցան լեհ ժողովուրդին կողմէ եւ ընդունուեցան հասարակութեան մէջ նպաստելով Լեհաստանի տնտեսական, քաղաքական եւ մշակութային կեանքին: Մենք կ'աղօթենք այսօր, որ ինչպէս անցեալին, անոնք պահպանեն իրենց ինքնութիւնը միանալով լեհական հասարակութեան, միաժամանակ նպաստելով այս պատմական, բայց նաեւ ժամանակակից եւրոպական երկրի ընկերային եւ տնտեսական կեանքին: Այս արարողութեան ընթացքին մենք կ'աղօթենք Լեհաստանի եւ Հայաստանի համար, ինչպէս նաեւ համայն աշխարհի խաղաղութեան համար: Թող մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի խաղաղութիւնը ըլլայ բոլորիս հետ եւ թող Ան ոգեշնչէ եւ առաջնորդէ աշխարհի ղեկավարները՝ խաղաղութիւն բերելու ազգերու եւ ժողովուրդներու միջեւ»:

Կրակովի միտրոպոլիտ Մա-

րեկ արքեպիսկոպոս Յեղրաշէսկիին իր խօսքին մէջ մասնաւորապէս նշեց. «Կազմիր Մեծի իշխանութեան ժամանակ, վերջինս հանդիպած է հայերուն ու անոնց եկեղեցին: Կազմիր Մեծը ողջունած եւ հնարաւորութիւն տուած է զարգացնելու իրենց ինքնութիւնը տալով տարբեր արտօնութիւններ եւ ճանչնալով հայ եկեղեցւոյ առանձնայատկութիւնը: Ժամանակի ընթացքին հայկական համայնքները կրցած են ազատօրէն զարգանալ, ունենալ իրենց սեփական ինքնակառավարումը եւ կը կառավարուէին սովորութային իրաւունքով: Հայերը ներկայ էին Լեհաստանի բացմաթիւ քաղաքներու մէջ, որոնք աչքի կ'իջնային արեւելեան լեզուներու իմացութեամբ: Անոնց շնորհիւ լեհերն իրենց այլ կերպ հասկացան եւ ներկայացան այլ ազգերու, իսկ շատ արեւելեան տարրեր արմատաւորուեցան լեհական մշակոյթին մէջ: Լեհական մշակոյթի բացառիկ դէմքեր հանդիսացող հայերէն են Զամոնցի Սիմէոնը, Ստեփանոս Ռոզկային, եղբայրներ Եօզէֆ Բարթլոմէյին եւ Շիմոն Զիմորովիչը, եւ այլք»:

Գերաշնորհ Մարկոս եպ. Յովհաննիսեան ներկաներուն ողջունեց հետեւեալ խօսքերով. «Աղօթքի լեզուն մէկ է, քանի որ Աստուած կը լսէ մեզ ինչպէս գրաբարով, լեհերէնով, լատիներէնով, այնպէս ալ մնացած բոլոր լեզուներով: Աստուածային սիրոյ նոյն ակունքէն բխող արժէքներով կերտուած են մեր՝ հայ եւ լեհ ըրիստոնեայ ժողովուրդներու մշակոյթները, որոնք որքան ալ տարբեր ըլլան, այնուամենայնիւ, հասկնալի ու հարազատ են զիրար: Փառք կը բարձրացնեմ առ Աստուած, որ հնարաւորութիւն կ'ընձեռէ ըրիստոնէական մեր եկեղեցիներուն տիեզերական համագործակցութիւնը գորացնելու, ինչպէս նաեւ խաղաղութեան եւ համերաշխութեան ոգին քարոզելու ամբողջ աշխարհին մէջ»:

Արարողութեանէն ետք Լեհաստանի Հանրապետութեան նախագահի խորհրդական Ա. Վաշկոն նախագահ Դուդայի անունէն, ՀՀ դեսպան Ս. Մկրտչեան եւ ՀՀ պատուաւոր հիւպատոս Հ. Պոյաճեան ծաղկեպսակներ տեղադրած են Կազմիր Մեծ թագաւորի շիրիմին:



**MEHER BABIAN, D.D.S.**  
General Dentistry  
**Տոթթ. Մհեր Պապեան**  
Ատամնաբոյժ


1111 S. Glendale Ave., Suite 206  
Glendale, CA 91205

Tel: (818) 547-0884  
Fax: (818) 547-9360

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք**  
**«Մասիս» Շաբաթաթերթին**  
Massis2@earthlink.net (626) 797-7680



# Արցախի եւ Հայաստանի Անկախութեան Տարեդարձին Առթիւ



ՎԵՐ. ԴՈՎՏ. ՎԱՅԱՆ Յ. ԹՈՒԹԻՎԵԱՆ

Սեպտեմբեր ամիսը հայ ժողովուրդին համար անկախութեան ոգեկոչումի ամիս է: Արդարեւ, այդ ամսուան ընթացքին Արցախ հռչակեց իր անկախութիւնը եւ Հայաստան իր վերանկախութիւնը: Վերանկախութիւն կ'ըսենք, որովհետեւ Հայաստան իր անկախութիւնը հռչակած էր Մայիս 28, 1918-ին:

Մօտ երկու քուկէս տարի տեւեց կեանքը մեր մանուկ հանրապետութեան: Ապա, պարագաներու դաժան դասաւորումով խորհրդայնացու ան Նոյեմբեր 29, 1920-ին: Շուրջ 70 տարի Սովետական լուծի տակ գտնուող Հայաստան իր անկախութիւնը հռչակեց 21, Սեպտեմբեր 1991-ին՝ Սովետական կայսրութեան անկումէն քանի մը ամիսներ առաջ: Այսպէս ուրեմն, Սովետական Միութեան մաս կազմող 15 հանրապետութիւններէն առաջիններէն մէկը եղաւ փոքրիկ Հայաստանը իր անկախութիւնը հռչակելու եւ ազատ ու անկախ պետութիւն դառնալու:

Այսպէս, 1991-ի Սեպտեմբեր 2-ին Արցախ, ապա նոյն ամսուն 21-ին Հայաստան՝ յաղթանակի զգացումներով հռչակեցին իրենց անկախութեան որոշումն ու ազատ, անկախ եւ գերիշխան ապրելու կամքը:

Արդարեւ, 1988-ի աւերիչ երկրաշարժէն շուրջ երկու քուկէս տարի ետք, ծնունդ առնող Արցախի եւ Հայաստանի հանրապետութիւններու ծագումն ու օրէ օր աճումն ու զարգացումը հրաշալի երեւոյթ մըն է մեր ժողովուրդի կեանքին մէջ: Մանաւանդ եթէ նկատի առնենք մեր դրացի Թուրք-ազերի տնտեսական շրջափակումն ու քաղաքական սեղմումները՝ Հայաստանի գոյատեւումը հրաշքի մը համագոր իրողութիւն մըն է:

Հայաստան եւ Արցախ մեր ազգային յոյսերուն, երազներուն ու տեսիլքներու գումարը կը խտացնեն: Պատմութեան արիւններէն ու աւերներէն ժառանգ մնացած այս երկու պատան հողերը մեր գոյութեան անշարժ վէմն են: Անոնք մեր բնիկ հայրենիքն են, մեր ցեղին դարաւոր քրտինքով, արցունքով եւ արիւնով կերտուած հայրենի իրականութիւնը:

Ներկայիս, սակայն, մեր երկու հանրապետութիւններն ալ խռովայնօրէն շրջանէ մը կ'անցնին, մեծ տագնապի մը դէմ հանդիման կը գտնուին: Որոշապէս, 2020-ի 44-օրուայ Արցախեան պատերազմը իր խոր ազդեցութիւնը թողուց աշխարհասփիւռ հայութեան վրայ ընդհանրապէս, եւ մեր հայրենաբնակ հայութեան վրայ մասնաւորապէս: Այնուհետեւ դժբախտաբար Ատրպէյճան իր շինծու

պատրուակներով կոպտօրէն կ'ոտնահարէ Նոյեմբեր 9, 2020 թուականի գինադադարին եռակողմանի համաձայնութիւնները: Ամիսներէ ի վեր ան կը շարունակէ Հայաստանի եւ Արցախի վրայ իր ապօրինի յարձակումներն ու ներթափանցումները: Իսկ վերջին շուրջ 8 ամիսներուն, ի գործ դրած իր անմարդկային շրջափակումով՝ Արցախահայութեան ամէնօրեայ գոյութեան կը սպառնայ: Անկասկած, Ատրպէյճանի ըրածը ուրիշ բան չէ եթէ ոչ ցեղասպանութիւն:

Մինչ այդ, Հայաստանի կա-

ռավարութիւնը աշխարհաքաղաքական հարցերու լուծման ի խնդիր եւ իր դրացիներուն հետ բնականոն յարաբերութիւններ հաստատելու համար քաղաքական ճշուններու բեռն ներքեւ՝ կ'ընէ որոշումներ, որոնք վթար կը հասցնեն Արցախի ինքնորոշման իրաւունքին եւ անկախութեան:

Պէտք է յստակ ըլլայ մեր հայրենի իշխանութիւններուն եւ համայն աշխարհի, թէ Արցախի ինքնիշխանութիւնը եւ արցախահայութեան ինքնորոշման իրաւունքը երբեք սակարկութեան նիւթ ըլլալու չէ: Արցախը ի վաղուց յետէ հայկական հող է եւ պէտք է մնայ հայկական հող:

Որոշապէս, ժամանակէ մը ի վեր, դաժան են օրերը մեր գոյգ հանրապետութիւններուն: Իրատես ըլլալու ենք իրերու կացութեան, բայց ոչ յոռետես, որովհետեւ յոռետեսութիւնը կրնայ մղել մեզ նահանջականութեան: Նահանջականութեամբ ապրող մարդիկ արդէն պարտուած են պայքարի կրկէսը մտնելէն առաջ:

Մենք հայ ենք եւ նահանջական ոգին խորթ է մեզի: Մեր պատմութիւնը այնպէս ցոյց կու տայ մեզի, որ իր ամենէն յուսա-

հատ պարագաներու մէջ իսկ մեր ժողովուրդը չէ ընկրկած, փոյթ չէ թէ՛ քանի հարուած ստացած է իր գլխուն՝ դեռ կրցած է ոտքի կանգնիլ եւ ամրացնել իր հոգեւոր ու բարոյական մկանները եւ իր ապրելու ու ստեղծագործելու արժանիքը ցոյց տալ:

Եթէ այս է մեր պատմութեան պատկերը, այն ատեն երկիւղի եւ յուսաբեկութեան պատճառ չունինք: Այդ մշտանորոգ ոյժի եւ կենսունակութեան յատկանիշ եղող մեր ազգային նկարագիրը պէտք է միշտ մնայ որպէս մեր հաւատքի եւ յոյսի խարիսխը:

Հետեւաբար, ինչպէս երէկ, այսօր ալ, մեր մարտահրաւէրը նոյնն է - չյանձնուիլ վհատումի ու ընկճումի յորձանուտին եւ չընկղմիլ յուսահատութեան ալեկոծ ովկիանին մէջ: Ընդհակառակը, հաւատքով մեր աչքերը սեւերել դէպի ապագան:

Արդ, անյողողող հաւատքի եւ յոյսի զգացումներով կ'ողջունենք Արցախի եւ Հայաստանի մեր գոյգ հանրապետութիւններուն անկախութեան տարեդարձները, անոնց մաղթելով նոր նուաճումներով լի ցնծուն տարիներ:

Մինչ մենք դպրոց կը վերադառնանք, նոր բան տեղի կ'ունենայ Քալիֆորնիոյ հանրային դպրոցներուն մէջ...

...անոնք կը կոչուին Համայնքային դպրոցներ:

- Ընտանիքներ, աշակերտներ, ուսուցիչներ եւ համայնքներ որոշում կու տան՝ իբրեւ մէկ անձ:
- Դասարանները կառուցուած են աշակերտներու կարիքներուն համաձայն:
- Խորհրդատուութիւն, Մտային Առողջութիւն, Մանկախնամութիւն եւ Ծնողներու Պատրաստութիւն:
- Աշակերտներու ներգրաւուածութեան աճ եւ ուսումնական յաջողութիւններու միջեւ բացի վերացում:

Յանելակ տեղեկութիւններու համար՝ [CTA.ORG/COMMUNITYSCHOOLS](http://CTA.ORG/COMMUNITYSCHOOLS)



# Ղարաբաղը Ականատեսի Վկայութեամբ՝ Անցեալ Դարի Երկրորդ Կեսին

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

1975 թուականին, Հայաստանի Ռազմաբարձի Ժողովուրդի Բնակարանի Ռազմաբարձի Ժողովուրդի Բնակարանի համալսարանի հետ միասին, իմ ղեկավարութեամբ, երկու համերգի համար մեկնեց Ատրպեյջան: Առաջին համերգը կայանալու էր Շուշիում, երկրորդը՝ Պաքուի մէջ: Կէսգիշեր էր, երբ տառապալից վիճակով հասանք 19-րդ դարի երկրորդ կեսի եւ 20-րդ դարի առաջին տասնամեակին լաւագոյնս ճանաչուած, Հայ Մշակույթի կենտրոն համարուող, փոքր փարիզ անունով յայտնի Շուշի:

1920 թուականին Ատրպեյջանի կողմից իրականացած 30 հազար հայերի կոտորածի ու քաղաքի լիակատար ավերումի արդիւնքում այն արդէն ամբողջովին խաւարի մէջ կորած գիւղական յիշեցնող անմարդաբնակ տարածք էր նման: «Կուլտուրայի տուն» կոչուածն էլ՝ կառուցման օրից չի վերանորոգուած անհրապոյց մի կառուց էր: Սրահում էլ՝ 30-40 կոտորած-թափած աթոռների մի բլուր:

- Այստեղ ե՞ս համերգ տալու բարեկամ, - հարցնում եմ միակ տղամարդուն:

- Մի անհանգստանաք տղերք ջան, առաւօտեան կը շարենք աթոռները:

- Էս ո՞ւր են մեզ դիմաւորողները, շրջանի ղեկավարներից մէկն ու մէկը, ի վերջոյ էս քոռ ու փուչ եղած կուլտուրայի տան վարիչը, - գայրացած հարցրի:

Մի քանի վայրկեան լուռ մնալուց յետոյ.

- Խեղճը էրես ունի՞, որ էրեւայ... կենտրոնից փողը չեն ղրկէ, որ ձեզ մարդավարի, հայավարի ընդունենք ճամբու դնենք: Էսպէս է մեր վիճակը: Ես էս շէնքի պահակն եմ: Թէ խի են ձեզ ըստեղ ղրկէ՞ չեմ հասկնայ: Վաղը հազիւ թէ կարենանք մի 20-30 մարդ բերել համերգի: Հիմա ես ձեզ տաք չայ կը տամ, յետոյ կը տանեմ հիւրանոց, էս շէնքի քովն է: Ընտեղ ինձնից բացի ուրիշ մարդ չկայ, համայն բալնիքը քովս է:

Ռուսական խոշոր ինքնաեռի պարունակութիւնը մի կերպ բաւարարեց մեր խմբի անդամներին թէ՛ մատակարարելու համար:

- Էս ուտելու բան-ման չկա՞յ, - համարձակուեց հարցնել դուրսուկահարներից մէկը:

- Չէ տղերք ջան..., ներող կ'եղնիք, համա առաւօտ վայ թէ հայ էլ էղնի..., դուք պտի ձեր գլխի ճարը տեսնիք: Կ'երթաք բազար, ընտեղ վայ թէ մի բան կ'եղնի, կամ էլ՝ պտի ընկնիք գիւղի տները ու ձեր փողով կարենաք ուտելու բան ձարել: Համա դուզը որ ըսեմ, գիւղացիք էլ աղքատ են, բան-գործ չունեն, ջահել-մահել չի մնացէ. Սաղ փախել են Պաքու, Ռուսաստան, կամ էլ՝ Հայաստան:

Չ'երկարացնեմ: Առաւօտեան թէյին աւելացաւ հացանման մի թխուածք: Ինչպէս ասել էր պահակ ենդը, գնացինք շուկայ, ուր միայն ու միայն չորս պառու կանայք էին «առեւտուր» անում՝ առանց որեւէ յաճախորդի: Ծախածներն էլ՝ միայն 3-4 տեսակ կանաչի, ուրիշ ոչինչ: Ի վերջոյ խումբ-խմբ բաժանուելով քաղաք-գիւղի տները շրջելով, ամէն մարդ մի կերպ կարողացաւ սովամահ չլինել:

Համերգն անցկացրինք օրը

ցերեկով, հազիւ 30 պառու կանանց ու գառամեալ ծերունիների ներկայութեան: Հովիկի (Յովհաննէս Բաղալեան) «Ջարթիր Լաօ»-ն էլ չ'օգնեց, որպէսզի աշխարհից անտեղեակ, իրենց դարդով տապալուած մեր տատերն ու պապերը գէթ կէս ժամով կարուէին իրականութիւնից ու չ'ննջէին համերգի ժամանակ:

Ահա այսպիսին էր Ղարաբաղը ոչ այնքան հեռու անցեալում, այն էլ՝ Ատրպեյջանի նման հզօր ու հարուստ երկրի տիրապետութեան տակ: Ղարաբաղը հայաթափելու անմարդկային, սադալեւական ծրագիրը իրականացուած էր ՄԵԾ վարպետութեամբ: Իսկ ահա Բաքուում բոլորովին այլ էր պատկերը

Պաքուի Արմէնիքէնը շրջանի հայութիւնը սրտաբաց, սոսնական տրամադրութեամբ ընդունեց Հայաստանի երաժիշտներին: Խանդավառութիւն էր ողջ շրջանում: Նոր-նոր յաջողութիւն եւ ճանաչում վայելող, յետագայում մեծ ժողովրդականութեան արժանացած երգիչ Բոկան (Բորիս Դաւիդեան) երկու օր շարունակ իր երաժշտախմբով աներեւակայելի հարուստ խնջոյքի պահեր պարգեւեց մեզ:

Այսպիսին էր Ղարաբաղի եւ Պաքուի հայերի ապրելակերպի տարբերութիւնը 50 տարի առաջ:

\*\*\*

Ներքոյ շարադրուող նիւթի հեղինակը նշանաւոր պատմաբան, գրող Բագրատ Ուլուբաբեանն է: Ճշմարիտ հայրենասէր Ղարաբաղցի գիտնականն իր ամբողջ կեանքում պայքարել է Ղարաբաղի ազատագրութեան համար:

Ղարաբաղից փախուստ տուած Բագրատ Ուլուբաբեանը երկար տարիներ աշխատել էր Ղարաբաղում, եղել տեղի Գրողների Միութեան նախագահ եւ «Սովետական Ղարաբաղ» թերթի խմբագիր, մօտիկից գիտէր թէ ինչպէս էր հարստահարուում տեղի հայ բնակչութիւնը: Իրեն ապահով զգալով Հայաստանում, Ուլուբաբեանը փորձում է համախոհներ գտնել պատմաբանների շրջանում՝ պայքար ծաւալելու Ղարաբաղը իր օրինական տիրոջը՝ Հայաստանին վերադարձնելու համար: Տեսնելով որ Ղարաբաղի հարցը անհնարին է քննարկման առարկայ դարձնել Հայաստանում, Ուլուբաբեանը որոշում է դիմել Սփիւռքի օգնութեանը: Այդ նպատակի համար, նա Ղարաբաղի հայութեան վիճակը նկարագրող ցնցող փաստերով լի մի յօդուած է պատրաստում եւ հայրիկիս՝ մատենագէտ-պատմաբան Յակոբ Անասեանի օգնութեամբ փորձում այն տարածել Սփիւռքում:

Հայրիկիս անձնական գրութիւններն ուսումնասիրելիս ձեռքս անցաւ Բագրատ Ուլուբաբեանի այդ յօդուածի կրկնօրինակը: Ժամանակին յօդուածի Բնօրինակը հայրիկիս միջոցով հասել է Ամերիկա եւ սպազորուել 1972 թուականի աշնանը՝ ԱՐՄԵՆԻԱ եւ ՀԱՅՐԵՆԻՔ պարբերականներում:

Այժմ ընթերցողին ենք ներկայացնում Բագրատ Ուլուբաբեանի «Ղարաբաղի իրական պատկերը» յօդուածը նոյնութեամբ՝ մասնակի կրճատումներով եւ իմ կողմից վերածուած դասական ուղղագրութեամբ:

\*\*\*

... Արցախ, Փոքր Սիւնիք, Լեռնային Ղարաբաղ: Հին ու հնա-

ւանդ անուններ, հայ հող, Հայաստան: Բայց եղաւ այնպէս, որ այդ հողը պոկեցին, կտրեցին Մայր Հայաստանից:

Այսույանդերձ, յոյս կար, որ հայ Ղարաբաղը երբեւէ կը միանայ իր Մայր Հայաստանին: Յոյս կար եւ յուսալով սպասում էր դարաբաղցին:

Շատ դաժանութիւններ եղան՝ Ղարաբաղցի հայից այդ յոյսը խլելու համար:

Երբ Ատրպեյջանական հանրապետութեան ղեկն ու իրաւունքը դժնալիշատակ Բաղիրովի ձեռքին էր, Ղարաբաղցին նոյնիսկ չէր կարող ասել, որ ինքը հայ է, Հայաստան աշխարհի որդի: Այդպիսի ամէն մի հայ դատապարտում էր հրապարակով: Նրա ճակատին խաւանում էին ՆԱՅԻՈՆԱԼԻՍՏ (Ազգայնամուլ) բառը եւ տանում այնտեղ, որտեղից վերադարձը հրաշք կարող էր լինել:

Երկար սպասումից յետոյ եկան աւելի բարուք օրեր: Միջուկորտը թեթեւացաւ: Ղարաբաղցին սկսեց իրեն աւելի ամուր գգալ պատկենական հողի վրայ, սկսեց աւելի ազատ մտածել, աւելի ազատ արտայայտել իր իղձերը Մայր Հայաստանի նկատմամբ: Գնալ-գալը շատացաւ, հեշտացաւ: Նա այլեւս վտանգ չ'էր տեսնում իր հայ լինելը, իր ազգային արժանապատուութիւնը ցոյց տալուց: Համարձակուեց նոյնիսկ օրինական պահանջներ ներկայացնել:


Լեռնային Ղարաբաղի մարզային կենտրոնը՝ Ստեփանակերտը, որ տարիներ շարունակ հողին էր կպել ու հողից վեր բարձրանալու ուժ ու կարողութիւն չ'ունէր, միանգամից բացեց թեւերը, կառուցման շունչ ու թափ առաւ, ծաւալուեց, մեծացաւ, գեղեցկացաւ: Աձեցին մտաւորականներ, որոնք արդէն կարող էին մարզի հայութեան անունից խօսել, ներկայացնել նրա խոհերն ու պահանջները:

Լեռնային Ղարաբաղը արդէն ունէր իր գրողները, դերասանները, երգիչները, իր գիտնականները, մշակույթի օճախները: Ազգային կեանքը մի տեսակ աշխուժացաւ:

Սակայն մարզի հայութիւնը դժգոհ էր իր վիճակից, որովհետեւ այդպէս էլ մնում էր որպէս հատուած, բաժանուած Մայր Հայաստանից:

Այս բանը գգում էին Ատրպեյջանի նոր ղեկավարները, որոնք չէին ազատուել ու չէին էլ ուզում ազատուել իրենց նախորդների մտայնութիւնից ու չար ծրագրերից: Նրանք գգում էին, որ փոքուել են ժամանակները՝ իրենց հայահալած քաղաքականութեան դէմ բողոքողներին այլեւս չէին կարող բանտ ու աքսոր քշել: Ուրեմն, պէտք էր նոր եղանակներ գտնել հին «մեղաւորներին» վնասագործելու համար: Շուտով գտան այդ եղանակները: Սովորական դարձան աշխատանքից հեռացնելու, կուսակցական տոյժ ու պատիժ տալու փաստերը:

Չուշացան նաեւ ազրբեջանական ազգամոլութեան գաղափարախօսները: Նրանք իրենց մամուլն ու գրքերը լցրեցին ամէնաբազմազան անհեթեթութիւններով, որոնցից մէկի համաձայն, Ղարաբաղի հայերը խեղճ եկուորներ են համարուում իրենց հողի վրայ: Միւսի կարծիքով, նոյն այդ հայերը ոչ թէ իսկական հայեր են, այլ բռնութեամբ հայացուած աղուաններ կամ թուրքեր: Իսկ մի երրորդը Ղարա-



բաղի «ինքնավարութեան» 40-ամեակը «ողջունեց» հետեւեալ բարբառանքով.

«Եղել է Շուշին, Աղդամը, բայց նրանց միջեւ ընկած Ստեփանակերտ քաղաք չի եղել»: Իբր հայկական 40 տարվա ընթացքին է, որ ընկել է ազրբեջանական երկու քաղաքների արանքը: Շուշի քաղաքի փառալույս մասը, որ հայկական է եղել, կործանել են 1920 թուին, վերջերս էլ ավերակներն են վերացել գէտնի երեսից, որպէսզի չարագործութիւնը վկայող ոչինչ չմնայ: Հիմա էլ, օրը ցերեկով կոչ են անում վերացնելու քաղաքի հայկական գերեզմանոցը:

Եւ այսպէս. Սկսուել է մի նոր արշաւ Ղարաբաղի հայութեան դէմ: Սկզբում գգուշաւոր, իսկ յետոյ՝ բացառապէս ու սանձարձակ: Հրագէտնով, խուլիզանի դանակով եւ մահ պատճառող այլեւայլ միջոցներով, Ղարաբաղի տարբեր վայրերում հայեր սպանուեցին: Օրերից մի օր սպանուեց..., ո՞չ, հոշոտուեց, խոշտանգուեց ծամեայ մի հայ տղայ: Մարդասպաններին գտան, երեք ազրբեջանցիներ էին, որոնցից մէկը այն դպրոցի դիրեկտորն էր, որտեղ սովորում էր այդ ութամեայ տղան:

Մարդասպաններին դատեցին եւ դատաւճիռը կարդացին Ստեփանակերտի քաղաքային այգում, բացօթեայ: Դատական որոշումը մեղմ էր ու անարդար: Ժողովուրդը, որ այլեւս չէր կարող համբերել՝ գայրացավ, պոռթկաց ու դիմեց ինքնադատաստանի, վառեց երեք մարդասպաններին: Դրան հետեւեց մի անեղ հաշուհարդար, որը ահա վեց տարի է չի աւարտուում ու չի մեղմանում: Բանտերը լցուեցին Ղարաբաղցի հայերով, որոնցից շատերը տանջամահ եղան հենց բանտի մէջ:

Մարտափր տարածուեց ամէնուր, սպանութիւններ տեղի ունեցան մարզի տարբեր վայրերում: Ստեփանակերտի շրջանի Կրասնի գիւղում ազրբեջանցի զինուորականները մորթեցին մի հայ գեղձկուհու եւ մնացին անպատիժ: Մարտակերտում ոչնչացրին կոլխոզային պահակի ամբողջ ընտանիքը: Ոճրագործները մինչեւ օրս էլ չեն «յայտնաբերուել»: Չեն «յայտնաբերուել» նաեւ այն գիշերահնչները, որոնք Նոր Շէնի դաշտում սպանեցին երկու հայ տրակտորիստի: Իսկ Շուշիի մասին խօսելն աւելորդ է, քանի որ այնտեղ յուրաքանչիւր ամիս հայ է սպանուում դանակով, ատրճանակի գնդակով, կամ էլ՝ մահադեղով:

Սպանութիւններին, ահաբե-



# Աղթամար Կղզիին Մէջ Գտնուող Ս. Խաչ Եկեղեցւոյ Պատարագը Այս Տարի Տեղի Ունեցաւ Աւելի Մեծաբանակ Մարդոց Ներկայութեամբ



Վանայ լիճի Աղթամար կղզիին մէջ գտնուող Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ կայացաւ հերթական պատարագը, որ, ի տարբերութիւն նախորդ տարուան, իր վրայ սեւեռած էր աւելի մեծ ուշադրութիւն:

Եկեղեցւոյ վերանորոգումէն յետոյ Թուրքիոյ կառավարութիւնը տեւական ժամանակէ կը մերժէր խաչ տեղադրել եկեղեցւոյ գմբէթին վրայ, բայց ի վերջոյ տեղի տուաւ, քանի որ ամբողջ աշխարհի հայութիւնը բողոքի ցոյց կազմակերպած էր, ու թէեւ Ս. Խաչ եկեղեցին սկսած է գործել որպէս թանգարան, այդուհանդերձ թրքական իշխանութիւնները կը թուրքերէն տարին մէկ անգամ այնտեղ պատարագ կատարել:

Այս տարուայ պատարագին առնչութեամբ անվտանգութեան միջոցառումները աննախադէպ էին: Թրքական յատուկ ծառայութիւններու ներկայացուցիչները Հայաստանէն ժամանածներուն կ'ուղեկցէին պանդոկներէն, իսկ կղզիին մէջ ուժեղացուած պարեկութիւն կ'իրականացնէին տասնեակ ոստիկաններ, որպէսզի կանխարգիլէին հնարաւոր անախորժութիւնները տեղաբնակ ծայրայեղական թուրքերու կամ ատրպէյճանցիներու կողմէ: Կղզիին վերեւ ամբողջ պատարագի ընթացքին կը պտտէր ոստիկանութեան ուղղակիութիւնը:

Պատարագի արարողութեան մասնակցեցան ոչ միայն հայեր, այլեւ բազմաթիւ զբօսաշրջիկներ տարբեր երկրներէ, ինչպէս նաեւ տեղաբնակ քիւրտեր եւ թուրքեր: Հաւաքուածները այնքան շատ էին, որ պատարագը նախ մեկնարկեց ներսը, այնուհետեւ շարունակուեցաւ եկեղեցւոյ բակին մէջ՝ նոյն ծիսակարգով, որմէ ներկաները ստացան մեծ բաւականութիւն:

Պատարագէն յետոյ «Արմենիորես»-ին տուած բացառիկ հարցազրոյցին, Կոստանդնուպոլսոյ հայոց պատրիարք, գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Մաշալեանը ըսաւ. «Մեզի համար մեծ առաւելութիւն եւ մենաշնորհ է Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ պատարագ մատուցելը: Սա հազար հարիւր տարուայ պատմութիւն ունեցող հոգեւոր եւ մշակութային արժէք է, ու թէեւ այժմ կարգավիճակով թանգարան է, սակայն յատուկ արտօնութեան շնորհիւ տարին մէկ անգամ այստեղ կը մատուցուի Սուրբ պատարագ: Փառք Աստուծոյ, որ ունինք նման հնարաւորութիւն: Ս. Խաչը ամբողջ Արեւելեան Անատոլիոյ մէջ միակ եկեղեցին է, որուն գմբէթին վրայ խաչ կայ, հետեւաբար այդ ինքնին մեծ վկայ-

ութիւն է»:

Սրբազանը նշեց, որ մարդիկ տարբեր զգացումներ ունին՝ ըլլան պաշտօնեաներ, թէ ուխտաւորներ, իսկ հոգեւորականներուն համար օրը իսկապէս փառաւոր էր: Ան տեղեկացուց, որ իւրաքանչիւր տարուան ընթացքին Աղթամար կղզի կ'այցելէ մօտ մէկ միլիոն մարդ:

«Երբ մարդիկ կը լուեն, կը խօսին քարերը: Կղզիին վրայ գտնուելու հանգամանքը չէ խանգարած, որ եկեղեցին լաւ պահպանուած մնայ, ուր յանուն ամբողջ հայութեան մատուցեցինք երկար սպասուած պատարագը՝ հոգեւոր կապ ստեղծելով ներկաներուն ու մեր նախնիներուն միջեւ: Անոնց օրհնութիւնը մեր վրայ է, որոնց մշտապէս կը յիշենք մեր աղօթքներուն մէջ, իսկ պատարագը իր հերթին մեծ շնորհք կը բերէ համայն հայութեան», ըսաւ արքեպիսկոպոս Մաշալեանը:

Անդրադառնալով հարցումին, թէ ինչ կը կատարուի, որպէսզի Ս. Խաչի մէջ պատարագ մատուցուի աւելի յաճախակի, պատրիարքը նշեց, որ Վանի եւ շրջակայ բնակավայրերուն մէջ շատ քրիստոնեայ հայեր չեն ապրիր: Բացի անկէ, եկեղեցին ունի թանգարանի կարգավիճակ, հետեւաբար կը գտնուի նաեւ միջազգային կառուցներու յատուկ հոգածութեան ներքոյ եւ չ'ընկալուի որպէս կանոնաւոր գործող տաճար: Պատրիարքը ըսաւ, որ մէկանգամեայ պատարագը առայժմ բաւարար է:

Խօսելով Թուրքիոյ տարածքին գտնուող բազմաթիւ լքուած ու կիսաքանդ հայկական եկեղեցիներու մասին՝ արքեպիսկոպոս Մաշալեանը ընդգծեց, որ Պոլսոյ պատրիարքարանը այդ շինութիւնները իր հովանիին տակ վերցնելու իրաւունք չունի, իսկ կառավարութիւնը, եթէ միջոցներ ունի, որոշակի վերականգնողական գործողութիւններ կ'իրականացնէ: Անոր պնդմամբ՝ հին եկեղեցիներու վերանորոգումը աւելի թանկ է, քան նոր վանքերու կառուցումը, ուստի այդ հարցով անհրաժեշտ են Թուրքիոյ եւ Հայաստանի համատեղ ջանքերը:

Պատրիարքը հարցազրոյցէն յետոյ միացաւ դուրսը իրեն սպասող բազմաթիւ ուխտաւորներուն եւ անմիջականօրէն գրուցեց անոնց հետ՝ իր օրհնութիւնը փոխանցելով ներկաներուն: Ի դէպ, մեր ամենաաշխույժ հայրենակիցներէն է Արտամէտի բնակչուհի Գայիանէ Գէորգեանը, որուն համար Սուրբ պատարագը իսկապէս աննկարագրելի իրադարձութիւն է, որուն

միշտ կը սպասէ անթաքոյց յուզմունքով: Ան Ս. Խաչի վերաբացումէն ի վեր աշխուժօրէն լծուած է եկեղեցւոյ շրջակայքը բարելաւելու աշխատանքներուն եւ այդ նպատակով մշտապէս կապի մէջ է Թուրքիոյ Զբօսաշրջութեան Նախարարութեան հետ: Գայիանէն ամէն անգամ մեծ ոգեւորութեամբ Աղթամարի կղզի կ'ուղեկցի Թուրքիոյ տարբեր շրջաններէն եւ Հայաստանէն ժամանող հայրենակիցներուն: Կը պատրաստուի հիմնելու

կան, բանաստեղծ Յուսիկ Արան: Ան արմատներով վանեցի է, քանի որ մայրական կողմի մեծ հայրը վան նահանգի Աղբակ գաւառէն է, ժամանակին մասնակցած է ինքնապաշտպանական մարտերուն, կորսնցուցած է պայքարի բովին մէջ նահատակուած հայրն ու եղբայրները:

Բանաստեղծը յայտնեց, որ այս օրերուն շրջելով Արեւմտեան Հայաստանի պատմական վայրերով՝ կատարած է գրառումներ, որոնցմէ



հասարակական կազմակերպութիւն՝ համայնքի աշխատանքներուն նոր լիցք հաղորդելու համար: Հայաստանէն ժամանածներու շարքին էր նաեւ յայտնի մտաւորա-

շուտով պիտի ծնին նոր ստեղծագործութիւններ՝ իրենց մէջ ամփոփելով յատկապէս Աղթամարի կղզիին մէջ տարին մէկ անգամ նշուող Սուրբ պատարագի խորհուրդը:

## Ղարաբաղը Ականատեսի Վկայութեամբ

Շարունակուած է 13-էն

կումների այս շարքը վերջ չունի, քանի որ ամէն շաբաթ մի նորն ու առաւել ահաւորն է կատարուած: Վէրջերս էլ ավտովթարի կազմակերպումով սպանել են մարզի գլխաւոր վիրաբոյժ Շահէն Դանիէլեանին: Մարզի վախկոտ ղեկավարները ջանում են այդ ստոր յանցագործութիւնը ներկայացնել որպէս պատահական աղետ: Ատրպէյճանի ազգամուլ ղեկավարները Ղարաբաղը նուաճելու ամէնաչուսալի միջոցներից մէկն են համարում մարզի աչքաբաց ու համարձակ մտաւորականների դէմ նիւթուող հալածանքները: Մարզում ստեղծել են մի այնպիսի վիճակ, արդարութեան մասին խօսք ասող եւ ընդվզող մտաւորականների շուրջը կրակի այնպիսի օղակ, որ նրանք թողել են տուն-տեղ, պապական տուն ու բնակավայր, եւ ապաստան են գտել ուրիշ վայրերում: Նրանց ետեւից հեռանում են նաեւ արհեստաւորներն ու մասնագէտները: Նրանք ուրիշ ելք չեն տեսնում դուրս գալու այն վիճակից, որ Ատրպէյճանի հայատեաց ղեկավարները եւ նրանց սպառնալիքի տակ ճգմուած հայ ապիկար պաշտօնեաներն են ստեղծել Ղարաբաղի անպաշտպան հայութեան համար:

Ինստիտուտի կէսն ադրբեջանական է՝ ադրբեջանցիների համար, այն էլ՝ ոչ ղարաբաղաբնակ ատրպէյճանցիների, այլ ուրիշ վայրերից եկող ադրբեջանցիների:

Հարց է ծագում. Ինչո՞ւ պիտի դուրսից եկող ադրբեջանցիներն ուսանի Ղարաբաղում եւ ոչ թէ տեղաբնակ: Պատասխանը յստակ է. Ատրպէյճանական բաժանմունքը պիտի վերածուէր լրտեսական կենտրոնի: Ինստիտուտն աւարտող ադրբեջանցիները գնալով շատացան Ղարաբաղում եւ օրէօր բազմապատկուելով, իրենց ձեռքն առան Ղարաբաղի վարչական օղակներն ու գանազան պաշտօններ: Ստեփանակերտի միլիցիայում (Ոստիկանութիւն, - ՀԵՆ Ա.) աշխատողների հիմնական մասը ադրբեջանցիներ են, եւ նրանք է, որ պիտի «պաշտպանեն» հայ աշխատաւորների իրաւունքները...

Ծանր, հուսահատ վիճակ է ապրում հայոց Ղարաբաղը: Ղարաբաղցի շատ է բողոքել, ընդվզել է իր արդար իրաւունքները պաշտպանելու համար, բայց միշտ էլ մնացել է անպաշտպան:

- Եւ ինչո՞ւ, մինչեւ ե՞րբ... Ոչ մի հանրապետութիւնում այնքան շատ չեն խօսում եղբայրութեան մասին, որքան Ատրպէյճանում:

- Ո՞ւր է եղբայրութիւնը, ո՞ւր են Ղարաբաղի հայութեան եղբայրները... Եթէ չեն ցաւում ուրիշների սրտերը, եթէ այսպիսին են նրա հետ եղբայրացածները, ապա ի՞նչ են մտածում արիւնակից եղբայրները, հայ եղբայրները:



# Եւրո-2024. Հայաստանի Հաւաքականը Հաւասարեցաւ Թուրքիոյ Հետ, Պարտուեցաւ Քրուաթիոյ Դէմ



Եւրո-2024-ի ընտրական մրցաշարի 5-րդ հանգրուանին Հայաստանի ազգային հաւաքականը Էստոնիայի դէմ մէջ հիւրընկալուեցաւ Թուրքիոյ կողմէ յաղթանակը կորսնցնելով վերջին վայրկեաններուն բաւարարուեցաւ հաւասար՝ 1:1 արդիւնքով:

Խաղի սկզբնաւորութեան թուրք հանդիսականները սուլեցին Հայաստանի հիմնի ժամանակ:

Առաջին խաղակէսիւր աւարտեցաւ առանց կոլերու: Ընդմիջումէն յետոյ, 49-րդ վայրկեանին հանդիպումին հաշիւը բացաւ Երեւանի «Փիւնիկի» 33-ամեայ կիսապաշտպան Արտակ Դաշեանը:

88-րդ վայրկեանին հաւասարութիւնը վերականգնեց ֆրանսական «Ռենի» 21-ամեայ յարձակող Պերտուզ Յիլտիրիմը:

6-րդ հանգրուանին Հայաստանի հաւաքականը Երեւանի վազգէն Սարգսեանի անուան «Հանրապետական» մարզադաշտին մէջ ընդունեց աշխարհի առաջնութեան պրոնզէ մետալակիր Քրուաթիայի հաւաքականին:

14-րդ վայրկեանին խաղի միակ կոլը նշանակեց գերմանական «Հոֆենհայմի» 32-ամեայ յարձակող Անտրէյ Կրամարիչը:

D խմբակէն ներս Քրուաթիան 4 խաղէ յետոյ 10 կէտով կը գլխաւորէ դասաւորման աղիւսակը: Նոյնքան կէտ ունի 5 հանդիպում կատարած Թուրքիան, որ երկրորդն է: Հայաստանի խումբը 5 խաղէն վաստակած է 7 կէտ եւ երրորդն է:

## Անգլիա-Ուքրանիա Հաւասար

Ֆուտբոլի Եւրո-2024-ի ընտրական մրցաշարի աւարտին կը մօտենան 5-րդ հանգրուանի հանդիպումները:

C խումբէն ներս Անգլիոյ հաւաքականը Լեհաստանի վրոյցով քաղաքին մէջ մրցեցաւ Ուքրանիոյ հաւաքականին հետ եւ բաւարարուեցաւ ոչ ոքի արդիւնքով՝ 1:1:

Անգլիան 5 խաղէն յետոյ 13 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը, Ուքրանիան 4 խաղերու ընթացքին վաստակած է 7 կէտ եւ երկրորդն է:

## Ատրպէյճանը Պարտուեցաւ Պելճիգացիներէն Եւ Վերջինն Է

Եւրո-2024-ի ընտրական մրցաշարի 5-րդ հանգրուանին Ատրպէյճանի հաւաքականը Պաքուի մէջ ընդունեց պելճիգացիներուն եւ պարտութիւն կրեց 0:1 արդիւնքով:

38-րդ վայրկեանին կոլի հեղինակ դարձաւ Սէուտական Արաբիոյ «Ալ Շաբապի» նորեկ, 30-ամեայ յարձակող Յանիկ Քարասկոն:

## ԱԱ-2026. Պրագիլի Յաղթանակին Նպաստեցին Նեյմարի Եւ Ռոտրիկոյի 2-Ական Կոլերը

Ֆուտբոլի 2026թ. աշխարհի առաջնութեան ընտրական մրցաշարի մեկնարկային հանգրուանին Պրագիլի հաւաքականը ընդունեց Պոլիվիայի խումբին եւ յաղթեց 5:1 արդիւնքով:

Երկուական կոլ նշանակեցին Նեյմարն ու Մատրիտի «Ռեալի» յարձակող Ռոտրիկոն:

Երկրորդ հանգրուանին պրագիլացիները Սեպտեմբերի 13-ին կը հիւրընկալեն Փերուի խումբը:

## Երլինկ Հոլանտ. Մեսիի Եւ Ռոնալտուի Խաղը Տեսնելը Արտօնութիւնն Է

Անգլիոյ ախոյեան, գաւաթակիր, Ախոյեաններու Լիկայի գաւաթակիր, Եւրոպայի սուպերգաւաթակիր «Մանչեսթըր Սիթիի» 23-ամեայ նորուեկիացի յարձակող Էրլինկ Հոլանտ համեմատած է Ֆրանսայի ախոյեան ՊՍԺ-ի եւ Ֆրանսայի հաւաքականի 24-ամեայ յարձակող Կրիստիան Միստրալի հետ իր հեռակայ դիմակայութիւնը արժանութիւնացի Լիոնել Մեսիի եւ փորթուկալացի Կրիշտիանու Ռոնալտուի դիմակայութեան հետ, որ տեւեց գրեթէ երկու տասնամեակ:

## Գերմանիան Առաջին Անգամ Ըլլալով Նուաճեց Պասքեթպոլի Աշխարհի Ախոյեանի Տիտղոսը



Պասքեթպոլի տղոց Գերմանիոյ հաւաքականը առաջին անգամ ըլլալով նուաճեց աշխարհի ախոյեանի տիտղոսը: Ֆիլիպինի մէջ տեղի ունեցած աշխարհի առաջնութեան եզրափակիչին գերմանացիները 83:77 արդիւնքով պարտութեան մատնեցին Սերպիոյ խումբին:

Գերմանիոյ հաւաքականը այս առաջնութեան յաղթեց բոլոր հանդիպումներուն (8 հաղթանակ):

Պրոնզէ մետալները նուաճեց Գանատայի հաւաքականը, որ յաւելեալ ժամանակին պարտութեան մատնեց ամերիկացիներուն՝ 127:118:

Գանատան առաջին անգամ դարձաւ մետալակիր պասքեթպոլի աշխարհի առաջնութիւններուն:

## Նովակ Չոկովիչ ԱՄՆ-ի Բաց Առաջնութեան Յաղթող

Աշխարհի երկրորդ ռակետ Նովակ Չոկովիչը Նիւ Եորքի մէջ աւարտած ԱՄՆ-ի բաց առաջնութեան եզրափակիչի ընթացքին աշխարհի երրորդ ռակետ, ռուս Դանիլ Մեդվեդեւին 6:3, 7:6 (7:5), 6:3 արդիւնքով յաղթելու շնորհիւ նուաճեց 24-րդ տիտղոսը «Մեծ սաղաւարտի» մրցաշարերուն:

Չոկովիչը կը ստանայ 2000 վարկանիշային կէտ եւ 3 միլիոն տոլար:

Ան դարձեալ կը զբաղեցնէ առաջին տեղը համաշխարհային դասակարգման աղիւսակին վրայ՝ շրջանցելով սպանացի Քառլոս Ալկարասին:

Չոկովիչը չորրորդ անգամ ըլլալով նուաճեց ԱՄՆ-ի բաց առաջնութեան տիտղոս՝ կրկնելով 2011, 2015, 2018 թուականներու յաջողութիւնը:



## Գօգօ Գաուֆ Առաջին Անգամ Նուաճեց US Open-ի Տիտղոսը

Աշխարհի 6-րդ ռակետ Գօգօ Գաուֆ առաջին անգամ նուաճեց ԱՄՆ-ի բաց առաջնութեան ախոյեանի տիտղոսը: Եզրափակիչին 19-ամեայ թենիսիստուհին մրցեցաւ աշխարհի երկրորդ ռակետ, Պելաուսի ներկայացուցիչ Արինա Սաբալենկայի հետ եւ յաղթեց 2:6, 6:3, 6:2 հաշուով:

Պայքարը տեւեց 2 ժամ եւ 5 վայրկեան:

Գաուֆը կը ստանայ 2000 վարկանիշային կէտ եւ 3 միլիոն տոլար:

Սաբալենկան կը ստանայ 1300 վարկանիշային կէտ, 1,5 միլիոն տոլար:

Սաբալենկան կը դառնայ աշխարհի առաջին ռակետ՝ շրջանցելով լեհ Իգա Շվիտնտեկին:



«Հիմա բոլորը կը կարծեն, որ ես ու Միստրալի փոխարինած ենք Մեսիին ու Ռոնալտուին: Բայց պէտք է մոռնալ, որ անոնք ինչպէս որ ֆուտբոլ կը ցուցադրէին եւ հիմա ալ կը շարունակեն մնալ ֆանտաստիկ խաղացողներ: Մեսիի եւ Ռոնալտուի խաղը տեսնելը արտօնութիւնն է:

«Ես երբեք ինձ որեւէ մէկուն չեմ հակադրեր: Ես այդպիսի մարդ չեմ: Միշտ կեդրոնացած եմ իմ խաղի վրայ եւ կը ցանկամ կատարելագործել, հաճոյք ստանալ իմ խաղէս եւ ըլլալ աւելի լաւ ֆուտբոլիստ», - Հոլանտի խօսքը կը մէջբերէ France Football-ը:

Միստրալի ու Հոլանտը այս տարուայ աշխարհի լաւագոյն ֆուտբոլիստի «Ոսկէ Գնդակ» մրցանակի երեք հաւակնորդներու թիւին մէջն են, սակայն լաւագոյնը աշխարհի ախոյեան Արժանթին հաւաքականի աւագ Լիոնել Մեսին է:





# ARMENIAN INDEPENDENCE DAY Festival

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԿ

# ՓԱՌԱՏՕՆ

SUNDAY, SEPTEMBER 17, 2023

STARTING AT 11:00AM

VERDUGO PARK / GLENDALE

1621 CANADA BLVD, GLENDALE, CA 91208

ORGANIZED BY

NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

GENERAL SPONSOR



SPONSORS



MEDIA SPONSORS



www.massispost.com



LIVE MUSIC

ARMENIAN FOOD

**FREE ADMISSION**  
ՄՈՒՏՔԸ ԱՂՍ

KIDS GAMES

ART EXHIBITION

To reserve your vendor booth, please call Nor Serount Cultural Association  
 Ձեր կրպակները ապահովելու համար, հեռաձայնեցե՛ք՝ Նոր Սերունդ Միութիւն  
**(818) 391-7938**